

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՐՈՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՄԱԳԻՍՏՐՈՍ

2023



Հոդվածների
ժողովածու

2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2

ՎԱՆԱԶՈՐ
2023

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА**

**ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА**

МАГИСТР

2

**ВАНАДЗОР
2023**

**THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE
AND SPORTS OF THE RA**

**VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN**

MASTER STUDENT

2

VANADZOR
2023

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջ. Ս. Վարդանյան, կ. գ. դ., պրոֆեսոր (խմբագրական խորհրդի նախագահ),
Հ. Հ. Օհանյան, տեխ. գ. թ., դոցենտ (պատասխանատու քարտուղար),
Հ. Ա. Ղազարյան, ք. գ. դ., պրոֆեսոր, **Է. Ա. Խաչատրյան**, ք. գ. թ., դոցենտ,
Մ. Պ. Կիրակոսյան, կ. գ. թ., դոցենտ, **Վ. Ռ. Քոչարյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ,
Ս. Մ. Փարսադանյան, ֆ.-մ. գ. թ., դոցենտ, **Ռ. Ս. Սահակյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ,
Մ. Ա. Սաքանյան, ֆ.-մ. գ. թ., դոցենտ, **Ա. Ս. Կյուրեղյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Մ. Պապոյան, տնտ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահ),
Ա. Գ. Հարությունյան, մ. գ. թ., դոցենտ, (պատասխանատու քարտուղար),
Հ. Ռ. Ավագիմյան, հ. գ. թ., դոցենտ, **Տ. Ս. Բաղդյան**, տնտ. գ. թ., դոցենտ,
Ն. Ս. Բարսեղյան, տնտ. գ. թ., դոցենտ, **Ա. Ա. Կոխլիկյան**, պ. գ. թ., **Վ. Ռ. Նազարյան**,
մ. գ. թ., դոցենտ, **Ա. Ա. Բարսեղյան**, մ. գ. թ., դոցենտ, **Հ. Կ. Հակոբյան**, դոցենտ,
Հ. Ա. Չատինյան, դոցենտ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ա. Զադինյան, ք. գ. թ., դոցենտ (խմբագրական խորհրդի նախագահ),
Լ. Հ. Պետրոսյան, ք. գ. թ., դոցենտ (պատասխանատու քարտուղար),
Ֆ. Վ. Մովսիսյան, պ. գ. դ., պրոֆեսոր, **Ս. Մ. Թումանյան**, ք. գ. թ., դոցենտ,
Ա. Ն. Մարուխանյան, ք. գ. թ., դոցենտ, **Շ. Ռ. Ղուկասյան**, ք. գ. թ., դոցենտ,
Թ. Վ. Թադևոսյան, ք. գ. թ., դոցենտ, **Կ. Ս. Առուստամյան**, ք. գ. թ., դոցենտ,
Լ. Յու. Վարդանյան, ք. գ. թ., դոցենտ:

ՄԱԳԻՍՏՐՈՍ-2 // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/: Խմբագրակազմ – Վանաձոր, 2023. – 112 էջ:

Ժողովածուն ամփոփում է ՎՊՀ 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի ուսանողների ավարտական որակավորման աշխատանքների թեմաներով գրված գիտական այն հոդվածները, որոնք երբևէ չեն հրատարակվել: Հոդվածները խմբագրակազմի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

З. С. Варданян доктор биол. наук, профессор, (председатель редакционного совета),
Э. Г. Оганян кандидат техн. наук, доцент (ответственный секретарь),
Г. А. Казарян докт. хим. наук, профессор, **Э. А. Хачатрян** канд. хим. наук, доцент,
М. П. Киракосян канд. биол. наук, доцент, **В. Р. Кочарян** канд. физико-математич.
наук, доцент, **С. М. Парсаданян** канд. физико-математич. наук, доцент, **Р. С. Саакян**
канд. физико-математич. наук, доцент, **М. А. Саканян** канд. физико-математич.
наук, доцент, **А. С. Кюрегян** канд. физико-математич. наук, доцент.

ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ

Г. М. Папоян канд. экономич. наук, (председатель редакционного совета),
А. Г. Арутюнян канд. педагогич. наук, доцент (ответственный секретарь),
А. Р. Авагимян канд психол. наук, доцент, **Т. С. Бадоян** канд. экономич. наук,
доцент, **Н. С. Барсегиан** канд. экономич. наук, доцент, **А. А. Кохликиан** канд.
историч. наук, **В. Р. Назарян** канд. педагогич. наук, доцент, **А. А. Барсегиан** канд.
педагогич. наук, доцент, **А. К. Акобян**, доцент, **Г. А. Чатинян**, доцент.

ГУМАНИТАРНЫЕ НАУКИ

Н. А. Джигинян канд филол. наук, доцент (председатель редакционного совета),
Л. Г. Петросян канд филол. наук, доцент (ответственный секретарь),
Ф. В. Мовсисян докт. историч. наук, профессор, **С. М. Туманян** канд филол. наук,
доцент, **А. Н. Саруханян** канд филол. наук, доцент, **Ш. Р. Гукасян** канд филол.
наук, доцент, **Т. В. Тадевосян** канд филол. наук, доцент, **К. С. Арустамян** канд
филол. наук, доцент, **Л. Ю. Варданян** канд филол. наук, доцент.

МАГИСТР-2 // Министерство образования, науки, культуры и спорта РА,
Ванадзорский государственный университет/. Редколлегия – Ванадзор, 2023. – 112 с.

В сборник включены неизданные статьи студентов магистратуры ВГУ
2022-2023 уч. года по темам их окончательных работ по специальности.
Статьи рецензированы, отредактированы и рекомендованы для печати по
решению редколлегии.

ISSN 2738-2761

© Авторская группа, 2023
© Ванадзорский государственный университет
имени О. Туманяна, 2023

SCIENTIFIC EDITORIAL COUNCIL

NATURAL SCIENCES

Z. S. Vardanyan, Doctor of Biological Sciences, Professor, (Head of the Scientific Editorial Council), **H. H. Ohanyan**, Candidate of Technical Sciences, Associate Professor (Executive Secretary), **H. A. Ghazaryan**, Doctor of Chemical Sciences, Professor, **E. A. Khachatryan**, Candidate of Chemical Sciences, Associate Professor, **M. P. Kirakosyan**, Candidate of Biological Sciences, Associate Professor, **V. R. Qocharyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **A. M. Parsadanyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **R. S. Saakyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **M. A. Sakanyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **A. S. Kyureghyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor.

SOCIAL SCIENCES

H. M. Papoyan, Candidate of Economic Sciences, (Head of the Scientific Editorial Council), **A. G. Harutyunyan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, (Executive Secretary), **H. R. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, Associate Professor, **T. S. Badoyan**, Candidate of Economic Sciences, Associate Professor, **N. S. Barseghyan**, Candidate of Economic Sciences, Associate Professor, **A. A. Kokhlikyan**, Candidate of Historical Sciences, **V. R. Nazaryan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **A. A. Barseghyan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **H. K. Hakobyan**, Associate Professor, **H. A. Chatinyan**, Associate Professor.

HUMANITIES

N. A. Jaghinyan, Candidate of Philological Sciences, Associate Professor, (Head of the Scientific Editorial Council), **L. H. Petrosyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, (Executive Secretary), **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, Professor, **S. M. Tumanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **A. N. Sarukhanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **Sh. R. Ghukasyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **T. V. Tadevosyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **K. S. Arustamyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **L. Yu. Vardanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor.

MASTER STUDENT-2 // The Ministry of Education, Science, Culture and Sports of the RA/. Editorial Board – Vanadzor, 2023. – 112 p.

The collection summarizes the scientific articles of VSU master's students of the 2022-2023 academic year on the topics of their thesis, which have not been published before. The articles were reviewed, edited and recommended for publication by the decision of the editorial board.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՃԱՆՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ПРОГРАММНАЯ ИНЖЕНЕРИЯ

SOFTWARE ENGINEERING

Ավտոմատացման սերվերի ինտեգրման խնդրի դրվածքը թեստավորման հաշվետվության ձևուն գործիքի հետ

Քոչինյան Արփինե

*Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Ծրագրային ճարտարագիտություն» մագիստրատուրա,
մագիստրոսական թեզի ղեկավար
տեխն. գ. դ., պրոֆեսոր Ռ. Սահակյան*

Հանգուցային բառեր. *թեստավորում, թեստերի կառավարման գործիքներ, ավտոմատացման սերվերներ, բարձրորակ ծրագրային արտադրանք*

Ներածություն

Թեստերի կառավարման գործիքներն օգտագործվում են բազմաթիվ կազմակերպությունների կողմից իրենց փորձարկման ջանքերն արդյունավետորեն կառավարելու համար: Դրանք իրականացնում են թեստային դեպքերի ստեղծման, թեստերի կատարման և թեստավորման գործողությունների ընդհանուր առաջընթացին հետևելու գործառնություններ: Այդուհանդերձ, այդ գործիքներն ի սկզբանե չեն ինտեգրված ավտոմատացման սերվերների հետ, որոնք սովորաբար օգտագործվում են ծրագրային ապահովման մշակման մեջ շարունակական ինտեգրման և շարունակական առաքման նպատակներով: Այդ խնդրի շտկումը ծրագրավորողներին թույլ կտա ավտոմատացնել ծրագրային ապահովման մշակման կյանքի ցիկլի տարբեր փուլերը, ներառյալ հավելվածի ստեղծումը, փորձարկումը և տեղակայումը:

Այսպիսով արդիական է թեստերի կառավարման գործիքների ինտեգրացիան ավտոմատացման սերվերների հետ, որը թույլ կտա թեստավորում իրականացնողներին ստանալ և ցուցադրել ավտոմատացման սերվերների կատարման արդյունքները թեստերի կառավարման գործիքներում: Այս ինտեգրումը կբարելավի թեստերի արդյունքների տեսանելիությունը և կհեշտացնի թեստավորման գործընթացը:

Գոյություն ունեցող տեղեկատվական հարթակների և համակարգերի ակնարկ

Ժամանակակից տեղեկատվական հարթակները կարևոր դեր են խաղում տարբեր ոլորտի կազմակերպությունների տվյալների կառավարման և կազմակերպման գործում: Կազմակերպություններն իրենց գործունեու-

թյան ընթացքում գնահատում են սեփական ռեսուրսների սպառումը, ընդլայնում են դրանց օգտագործման հնարավորությունները և կայացնում որոշումներ: Վերը նշվածից ելնելով՝ կազմակերպությունները գնահատում են տեղեկատվական հարթակների և համակարգերի հնարավորություններն ու առկա մարտահրավերները՝ հաշվի առնելով դրանց զգալունությունը թեստերի կառավարման նկատմամբ:

Ներկայացնենք վերը նշված խնդրին վերաբերող տեղեկատվական հարթակներից և համակարգերից մի քանիսը.

- TestRail-ը (2004 թվականահին հիմնադրված Gurock Software-ի փորձարկման դեպքերի կառավարման առաջատար լուծում: Պաշտոնական կայք՝ <http://www.gurock.com>) testrail) [1]) թեստերի կառավարման հանրաճանաչ գործիք է, որն օգտագործվում է բազմաթիվ կազմակերպությունների կողմից՝ իրենց փորձարկման ջանքերն արդյունավետորեն կառավարելու համար: Փորձարկման դեպքերի ստեղծման, թեստերի կատարման և թեստավորման ընդհանուր առաջընթացին հետևելու առանձնահատկություններով՝ TestRail-ը ճանաչվել է որպես ծրագրային ապահովման մշակման կյանքի ցիկլի իրացման արժեքավոր գործիք: Այնուամենայնիվ, ավտոմատացման սերվերի հետ ինտեգրման բացակայությունը TestRail-ում խնդիր է առաջացնում թեստավորում իրականացնողների համար, ովքեր կարևորում են անխափան հաղորդակցությունը նշված երկու համակարգերի միջև:

- TestLink-ը (թեստային կառավարման համակարգ է, մշակված Teamtest-ի կողմից՝ 2003 թվականի հոկտեմբերի 17-ին: Պաշտոնական կայք՝ <https://testlink.org>) [2]) բաց կոդով թեստի կառավարման գործիք է, որը թիմերին թույլ է տալիս կառավարել թեստային դեպքերը, ստեղծել թեստային պլաններ և հետևել թեստի կատարմանը: Այն առաջարկում է ինտեգրում սխալների ֆիքսում և նրանց ընթացքի հետազոծում համակարգերի հետ, որը բավարար չէ վերը նշված ինտեգրման խնդիրը լուծելու համար:

- TestCollab-ը (մշակվել է «Enov8» ծրագրային ապահովման մշակման ընկերության կողմից: Պաշտոնական կայք՝ <https://testcollab.com>) [3]) թեստային կառավարման գործիք է, որը թիմերին թույլ է տալիս ստեղծել, կազմակերպել և կատարել թեստային դեպքեր: Այստեղ ևս առկա է ինտեգրման խնդիրը:

- Jenkins-ն (հեղինակ՝ Kohsuke Kawaguchi, նախնական թողարկում՝ փետրվարի 2, 2011, պահոց՝ github.com/jenkinsci/jenkins) [3], ծրագրավորման լեզուն՝ Java, հարթակ Java 11, պաշտոնական կայք՝ www.jenkins.io

[4]) ավտոմատացման սերվեր է, որը հզոր հնարավորություններ է տրամադրում կառուցման և տեղակայման գործընթացների ավտոմատացման համար: Այն դարձել է հիմնական բաղադրիչ ծրագրային ապահովման մշակման միջավայրերում՝ շնորհիվ շարունակական ինտեգրման և առաքման: Jenkins-ը հաջողում է աշխատանքային հոսքերի ավտոմատացման և կազմակերպման գործում, սակայն չի առաջարկում թեստային կառավարման համապարփակ առանձնահատկություններ, որոնք առկա են թեստային կառավարման հատուկ գործիքներում, ինչպիսին է TestRail-ը:

• Azure DevOps-ը (նախկինում հայտնի էր որպես Visual Studio Team Services: Մշակվել է Microsoft ընկերության կողմից: Պաշտոնական կայք՝ <https://azure.microsoft.com/en-us/services/devops/>) ներառում է օգտատիրոջ կողմից ստեղծված տարբերակների վերահսկման, շարունակական ինտեգրման և առաքման, նախագծերի կառավարման և այլ գործառույթներ: Այն նախատեսված է օժանդակելու ծրագրային ապահովման մշակման թիմերին արդյունավետորեն պլանավորելու, նախագծելու, փորձարկելու և տեղակայելու հավելվածները:

Հաշվի առնելով դիտարկված գործիքների ուժեղ կողմերն ու սահմանափակումները՝ թեստերի նախագծման գործիքների և ավտոմատացման սերվերի ինտեգրումը կարևոր է դառնում նրանց համակցված հնարավորություններն օգտագործելու համար:

Վերը նշված ինտեգրումը իրականացնելու համար հողվածում առաջարկվում է գոյություն ունեցող առկա տեղեկատվական հարթակներից որպես թեստերի նախագծման հարթակ՝ ընտրել TestRail-ը, որպես ավտոմատացման սերվեր՝ Jenkins-ը:

Օգտագործելով TestRail-ի և Jenkins հարթակների ուժեղ կողմերը՝ կազմակերպությունները կարող են հստակեցնել իրենց փորձարկման ջանքերը, բարելավել հարթակների համագործակցությունը և արդյունավետ կերպով մատուցել բարձրորակ ծրագրային արտադրանք:

Խնդրի դրվածքը

Ներկայացված աշխատանքի նպատակն է մշակել թեստավորման հաշվետվության ճկուն գործիք՝ առաջարկի ձևավորման փորձագիտական համակարգի հիման վրա:

Խնդիրն այն է, որ TestRail թեստերի կառավարման գործիքը ինտեգրված չէ Jenkins-ի՝ լայնորեն օգտագործվող ավտոմատացման սերվերի հետ: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ընդլայնել TestRail-ի թեստի կառավարման հնարավորությունները՝ թույլ տալով թեստավոր-

րում իրականացնողներին ստանալ և ցուցադրել Jenkins-ի կատարման արդյունքները անմիջապես TestRail ինտերֆեյսում:

Սասնավորապես անհրաժեշտ է.

- Ինտեգրել TestRail-ը Jenkins-ի հետ՝ Jenkins-ից կատարման արդյունքներ ստանալու և դրանք TestRail-ում ցուցադրելու համար:
- Բարելավել TestRail-ի օգտատիրոջ ինտերֆեյսը՝ Jenkins-ի գործարկման արդյունքները ստանալու համար:
- Ստեղծել անհրաժեշտ հաղորդակցություն TestRail-ի և Jenkins-ի միջև՝ անխափան ինտեգրում ապահովելու համար:

Սահմանափակումներ և պահանջներ

Առաջարկվող ինտեգրումը նպատակ ունի բարելավել թեստի կատարման տեսանկյունությունը, պարզեցնել թեստավորման գործընթացը և արդյունքները դիտելու համար վերացնել թեստավորում իրականացնողների կողմից TestRail-ի և Jenkins-ի միջև անցումներ կատարելու անհրաժեշտությունը:

TestRail-ի ֆունկցիոնալությունների շարքում անհրաժեշտ է ավելացնել հարցումներ կատարելու և համապատասխան գործարկման արդյունքները Jenkins-ից ստանալու ֆունկցիոնալությունը, ներառյալ թեստային գործարկման կարգավիճակը, գործարկման ժամանակը և հարակից տեղեկամատյանները կամ արտեֆակտները:

Ստացված տվյալներն անհրաժեշտ է մշակել և ներկայացնել պարզ և հակիրճ ձևով TestRail-ում, ցանկալի է առանձին բաժնում կամ ներդիրում:

Իրական ժամանակի թարմացումներն անհրաժեշտ է իրականացնել համոզվելու համար, որ TestRail-ում ցուցադրվող գործարկման արդյունքները ճշգրիտ և արդիական են:

Ինտեգրումը պետք է փոխկապակցվի նույնականացման և մուտքի վերահսկման մեխանիզմների հետ՝ ապահովելու տվյալների անվտանգությունը և օգտատերերի գաղտնիությունը:

Առաջարկվող լուծումը պետք է լինի լայնածավալ, որպեսզի ադապտացնի TestRail-ի և Jenkins-ի տարբերակների կամ կազմաձևերի ապագա փոփոխությունները:

Արդյունքում TestRail-ի և Jenkins-ի ինտեգրումը թույլ կտա TestRail-ին ստանալ և ցուցադրել կատարման արդյունքները Jenkins-ից իր ինտերֆեյսում:

Ներկայացված թեստավորման արդյունքները պետք է լինեն պարզ, հակիրճ և արժեքավոր՝ ըստ թեստի կարգավիճակի և զարգացման:

Ներկայացված ինտեգրումը ամուր, մասշտաբային և ադապտիվ լուծում է TestRail-ի և Jenkins-ի ապագա փոփոխությունների կամ թարմացումների համար:

Խնդրի մանրամասն պարզաբանումը հստակ պատկերացում կտա TestRail-ի Jenkins-ի հետ ինտեգրելու նպատակների, սահմանափակումների և պահանջների մասին:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ քայլերը

1. Ինտեգրել TestRail-ը Jenkins-ի հետ՝ Jenkins-ից կատարման արդյունքներ ստանալու և դրանք TestRail-ում ցուցադրելու համար, այդ թվում.

- TestRail-ը Jenkins-ի հետ ինտեգրելու համար մշակել հստակ ռազմավարություն՝ հաշվի առնելով առկա ինտեգրման տարբերակները և դրանց համապատասխանությունը տվյալ համակարգերին,
- հստակեցնել անհրաժեշտ տվյալների բազմությունը, որը պետք է փոխանցվի TestRail-ի և Jenkins-ի միջև, կազմել դրանք համեմատելու պլան՝ ապահովելով տվյալների համապատասխանությունը,
- ստեղծել թեստավորման միջավայր՝ ինտեգրման ճշգրտությունը, արդյունավետությունը և հուսալիությունը ստուգելու և երկու համակարգերի միջև սահուն փոխանցում ապահովելու համար:

2. Բարելավել TestRail-ի օգտատիրոջ ինտերֆեյսը՝ Jenkins-ի գործարկման արդյունքները ստանալու համար, այդ թվում.

- կազմակերպել օգտատիրոջ հարմարավետության վրա հիմնված նախագծման մոտեցում՝ ապահովելով համակարգի պարզ և հարմարավետ օգտագործումը, ինչպես նաև Jenkins-ի գործարկման արդյունքների արդյունավետ մեկնաբանումը օգտատիրոջ կողմից,
- կիրառել վիզուալիզացիայի համապատասխան մեթոդներ՝ օգտատիրոջ կողմից տեղեկատվության արագ ընկալումն ապահովելու համար:

3. Ստեղծել անհրաժեշտ հաղորդակցություն TestRail-ի և Jenkins-ի միջև՝ անխափան ինտեգրում կազմակերպման համար, այդ թվում.

1. ընտրել ինտեգրման այնպիսի մեթոդ, որը հիմնված կլինի տվյալների փոխանակման պահանջների վրա,

2. ներդնել նույնականացման անվտանգ մեխանիզմներ համակարգերի միջև՝ տվյալների փոխանակումը և մուտքի վերահսկումը պաշտպանելու համար:

Եզրակացություն

Վերը նշված քայլերի իրականացումը TestRail-ի և Jenkins-ի արդյունավետ ինտեգրման հնարավորություն կտա՝ բարելավելով օգտատիրոջ ինտերֆեյսը (տեսանելիության, երկու համակարգերի միջև ամուր հարողակցություն հաստատման ապահովում):

Արդյունքում մշակված համակարգն իրենից կներկայացնի թեստավորման հաշվետվության ճկուն գործիք, որի կիրառման դեպքում.

- կազմակերպությունները կբարելավեն իրենց փորձարկման ջանքերը,
- կպարզեցվի թեստավորման գործընթացը,
- կբարելավվի կատարվող աշխատանքի արդյունավետություն՝ ապահովելով բարձրորակ ծրագրային արտադրանքի մատուցում:

Գրականություն

1. TestRail պաշտոնական փաստաթղթեր (2023) [Էլեկտրոնային ռեսուրս] – հասանելիություն <https://www.gurock.com/testrail/docs>, 13.10.2023:
2. TestLink-ի պաշտոնական փաստաթղթեր (2023) [Էլեկտրոնային ռեսուրս] – հասանելիություն <https://testlink.org/>, 13.10.2023:
3. TestCollab-ի պաշտոնական փաստաթղթեր (2023) [Էլեկտրոնային ռեսուրս] – հասանելիություն <https://testcollab.com/>, 13.10.2023:
4. Jenkins-ի պաշտոնական փաստաթղթեր (2023) [Էլեկտրոնային ռեսուրս] – հասանելիություն <https://www.jenkins.io/doc>, 13.10.2023:
5. Azure DevOps-ի պաշտոնական փաստաթղթեր (2023) [Էլեկտրոնային ռեսուրս] – հասանելիություն <https://azure.microsoft.com/en-us/services/devops/>, 13.10.2023:

Постановка задачи интеграции сервера автоматизации с гибким инструментом отчетов о тестировании

Кочинян Арпине

Факультет естественных наук,

«Программная инженерия»,

руководитель магистерской диссертации:

доктор технических наук, профессор Р. Саакян

Резюме

Ключевые слова: *тестирование, инструменты управления тестированием, серверы автоматизации, высококачественные программные продукты*

Представленная работа предполагает объединение пользовательского интерфейса средства управления тестированием с серверами автоматизации непрерывной интеграции и непрерывной доставки разработки программного обеспечения, что упростит поиск и отображение результатов запуска серверов автоматизации в инструменте управления тестированием.

Эта интеграция улучшит видимость результатов выполнения тестов, избавив тестировщиков от необходимости переключаться между инструментами, которые они рассматривают.

Путем плавного объединения пользовательского интерфейса инструмента управления тестированием с серверами непрерывной интеграции разработки программного обеспечения и автоматизации непрерывной доставки, организации могут сосредоточить свои усилия по тестированию, улучшить сотрудничество между группами разработчиков и тестировщиков, а также получить видимость результатов выполнения тестов в режиме реального времени. Простой и лаконичный способ использования инструмента, позволит тестировщикам получать доступ к результатам и анализировать их на одной платформе.

Кроме того, интеграция обеспечит обновления в режиме реального времени, автоматически отражая изменения в состоянии выполнения теста или обновления, внесенные на сервер автоматизации в инструменте управления тестированием. Эта комбинация позволит командам тестировщиков обновлять последние результаты испытаний, избегая необходимости обновления вручную или переключения между различными инструментами.

Statement of the Problem of Integrating an Automation Server with a Flexible Test Reporting Tool

Kochinyan Arpine

Faculty of Natural Sciences,

"Software Engineering",

Academic Supervisor: R. Saakyan

Doctor of Technical Sciences, Professor

Summary

Key words: *testing, test management tools, automation servers, high-quality software products*

This article combines the user interface of a test management tool with automated continuous integration and continuous delivery servers for software development. This will streamline the test management tool's search and display of the outcomes of automation servers that are now in operation.

This integration will improve visibility of test execution results, eliminating the need for testers to switch between the tools they are considering.

By seamlessly combining the user interface of a test management tool with software development continuous integration and continuous delivery automation servers, organizations can focus on their testing efforts, improve collaboration between development and test teams, and gain real-time visibility of test execution results. The simple and concise way to use the tool will allow testers to access and analyze results in one platform.

Additionally, the integration will provide real-time updates, automatically reflecting changes in test execution status or updates made in the automation server of the test management tool. This combination will allow test teams to update the latest test results without having to manually update or switch between different tools.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԵԹՈԴԻԿԱ

ШКОЛЬНАЯ ПЕДАГОГИКА И
МЕТОДИКА

SCHOOL PEDAGOGY AND
METHODOLOGY

Սովորողների գեղագիտական դաստիարակության անհրաժեշտությունը արդի պայմաններում

Ալեքսանյան Արփինե

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»,
մագիստրոսական թեզի ղեկավար
մ. գ. թ., դոցենտ Լ. Բաղդասարյան*

*Հանգուցային բառեր. մշակույթ, գիտատեխնիկական աճ, անձի
զարգացում, աշխարհայացք*

Օսնություն

Հոդվածում բացահայտել ենք սովորողների գեղագիտական դաստիարակության մակարդակը «նոր մշակույթի» պայմաններում. սովորողների գեղագիտական դաստիարակության բարդությունները պարզելու նպատակով հարցվել են ք. Վանաձորի 6 դպրոցների թվով 300 աշակերտներ: Որպես ախտորոշման մեթոդ ընտրել ենք Սուխանովայի հարցման, անավարտ նախադասությունների և գեղարվեստական-արտահայտիչ վերլուծության թեստերը: Ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ սովորողների մոտ կա վառ արտահայտված հետաքրքրություն դեպի գործունեության գեղագիտական տեսակներ:

Ժամանակակից աշխարհում երեխան շրջապատված է թվային տեխնոլոգիաներով, նա գուրկ է մնում արվեստի հետ կենդանի շփումից, դա ավելի վառ արտահայտվում է գյուղական համայնքներում բնակվող երեխաների մոտ: Այդ նպատակով Լոռու մարզի թվով 30 դպրոցներում իրականացրել ենք «Թանգարանը դպրոցում» կրթական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս մեր համայնքում բնակվող երեխաներին թանգարանից տարված ստեղծագործությունների միջոցով բարձրացնել գեղագիտական ճաշակը, հասկանալ շրջապատող աշխարհի գեղեցկությունը: Սաները լրացուցիչ տեղեկություններ են ստանում կերպարվեստի մասին:

Հարցախույզ մեթոդը հնարավորություն տվեց պարզելու, որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը (աուդիոգրի, տեղեկատվական կրպակ, VR ակնոցներ և այլն) կիսթանի թանգարան-դպրոց կապի զարգացմանը:

Սովորողների գեղագիտական դաստիարակության ախտորոշման արդյունքները հիմք են հասկանալու արդի պայմաններում իրականացվող գեղագիտական դաստիարակության արդյունավետությունը:

Կրթության որակի կատարելագործումն անընդհատ տեղի ունեցող գործընթաց է: Ժամանակակից աշխարհում փոխվել են պահանջները և դրանց բավարարման համար անհրաժեշտ միջոցները: Որակյալ կրթություն իրականացնելու համար հարկավոր է հետևել գիտատեխնիկական աճին, լինել բաց փոփոխությունների համար: Ցանկացած մարդ, դաստիարակվելով դպրոցում, դառնում է կրողը ոչ միայն գիտելիքների, այլև սովյալ հասարակության մշակութային արժեքների [1]:

Հնագույն ժամանակներից գեղագիտական և բարոյական դաստիարակություն հասկացությունները եղել են սերտ փոխկապակցված: Հին հույներն օգտագործել են «կալոկագատիյա» տերմինը, որում «կալոս» նշանակում է գեղեցիկ, իսկ «ագատոն»՝ բարի, լավ: Այս տերմինը տալիս է իրական նախատիպն այն մարդու, ում արտաքին և ներքին գեղեցկությունը հանդես է գալիս որպես անբաժանելի միություն [2]:

Անհիշելի ժամանակներից մեծ մտածողները երազել են ունենալ այնպիսի դպրոց, որտեղ նախապատվությունը չէր տրվի սովորողին պարզապես գիտելիքով զինելուն ու ճիշտ վարքագիծ «վարժեցնելուն», այլ կտար ավելին նրա հոգուն և բանականությանը: Կրթությունից բացի՝ մանկավարժը պետք է զբաղվի նաև սովորողների դաստիարակությամբ՝ դասերից հետո կամ դասաժամերի ընթացքում: Այն, թե ինչպես է սովորողն ընկալում իր «ես»-ը, որոշում է, թե ինչպես է նա ընկալում արտաքին աշխարհը: Աշակերտակենտրոն կրթությունը ենթադրում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների կառուցում ոչ միայն վերջնարդյունք գրանցելու, այլև երկու կողմերի մտքերի միջև համաձայնություն գտնելու նպատակով: Սովորողի անձի զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սովորեցնողը նույնպես սովորում է, պատրաստ է ինքնակատարելագործվելու [3]:

Մարդու հոգևոր զարգացման համար մեծ նշանակություն ունի գրականությունը: Մաքսիմ Գորկին ասում է. «Որքան շատ եմ ընթերցում, այնքան շատ եմ գրքերն ինձ մոտեցնում աշխարհին, այնքան գունավոր և իմաստաշատ է դառնում ինձ համար կյանքը»:

Արևելյան երկրներում ասում են. «Անապատի ավազներում չկա գեղեցկություն, գեղեցկություն կա արաբների հոգիներում» [4]: Դպրոցի

խնդիրն է նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Ցածր դասարաններում գեղագիտական դաստիարակություն արդեն իսկ իրականացվում է լեզվի, գրականության, երաժշտության, նկարչության, բնագիտության դասաժամերի ընթացքում: Այս գործում մեծ է ուսուցչի ներդրումը: Ասվածի վառ օրինակ են այն բոլոր պատասխանները, որոնք ստացանք կրտսեր դպրոցականների հարցումների ժամանակ: Հարցին, թե որտեղից են տեղեկացված մշակույթի մասին, պատասխանում էին, որ դասերի ընթացքում կամ դասողեկական ժամերին ուսուցիչն է իրենց ծանոթացրել այդ գործերին: Այս տարիքում գեղագիտական դաստիարակություն կարելի է իրականացնել՝ երեխաներին բանաստեղծություններ, երգեր սովորեցնելով:

Ըստ Կ. Դ. Ուշինսկու՝ ամենալավ դաստիարակը բնությունն է. «... վարդագույն ամառ և ոսկեգոծ աշուն. նրանք չէին արդյոք մեր լավագույն դաստիարակները: Իմ կյանքի ընթացքում ես եկել եմ խորը համոզմունքի, այն է. երիտասարդ հոգու վրա անչափ մեծ ազդեցություն ունի գեղեցիկ բնապատկերը, կանաչ դաշտը, և այդ ուժգին ազդեցության հետ չի կարող մրցել նույնիսկ ուսուցչի ազդեցությունը» [5]:

Սովորողներին բնության գեղեցկության հետ ծանոթացնելու համար կազմակերպվում են տարբեր էքսկուրսիաներ և էկոլոգիական ծրագրեր:

Գեղագիտական պահանջմունքների ձևավորման և ամրապնդման ավելի խորացված դաստիարակչական աշխատանքներ տարվում են նաև ավագ դասարաններում:

Երաժշտությունը մարդուն ուղեկցում է վաղ հասակից: Դասական կոմպոզիտորների երաժշտական գործերով են դաստիարակվել ինտելեկտուալ բարձր չափանիշներ ունեցող շատ սերունդներ: Մոռացված երաժշտական ավանդույթները պետք է վերագտնվեն: Հարկավոր է վերադառնալ ժողովրդական երաժշտությանը:

Մեծ է մշակույթի ազդեցությունը մարդու իրականության ընկալման վրա: Այն իրականացնում է ճանաչողական գործառույթ և օգնում է ձևավորել անձի հայացքներն ու արժեհամակարգը: Վիսարիոն Բելինսկին նշում է, որ արտաքին աշխարհի ճանաչումն իրականացվում է երկու ուղղություններով՝ գիտական ճանաչման ճանապարհի և մշակութային ճանաչման ճանապարհի: Նա ասում է, որ գիտնականը խոսում է փաստերով, իսկ արվեստագետը՝ նկարներով: Արդյունքում երկուսն էլ նույն երևույթի մասին են խոսում: Այս առումով Վ. Գ. Բելինսկին նշում է,

որ մշակույթն ազդում է մարդու գիտակցության և համոզմունքների ձևավորման վրա ոչ պակաս, քան գիտությունը:

Մարկ Ռոթկոն ասել է. «Այն փաստը, որ գեղանկարը սկսվում է նկարով, արդեն ակադեմիական մոտեցում է: Մենք սկսում ենք գույնից: Առաջնայինը գույնն է»:

Մենք ապրում ենք մշակութային արժեքների վերահիմաստավորման ժամանակաշրջանում և ականատեսն ու կրողն ենք ժամանակակից արվեստի ազդեցության: Ժամանակակից արվեստն այսօրվա արվեստն է: Այն ստեղծվել է 20-րդ դարի երկրորդ կեսին կամ 21-րդ դարում:

Ռեդի-մեյդ տեխնիկան ենթադրում է պատրաստի արտադրանքը որպես ինքնուրույն ստեղծագործություն ներկայացնելը: Այս տեխնիկայի կիրառման ամենահայտնի օրինակը Մարսել Դյուշանի (ռեդի-մեյդ տեխնիկայի հիմնադիր) «Շատրվան»-ն է: Արվեստի գործ կոչվող առարկան պարզապես միզաման է: Այսինքն՝ հեղինակն այն գնել է խանութից, շրջել է 90 աստիճանով, մակագրել է և դրել պատվանդանի վրա: Արվեստի գործը պատրաստ է: Նման օրինակները շատ են (Մարսել Դյուշան, «Հեծանիվի անիվը»; Սալվադոր Դալի, «Հեռախոս»; Էնդի Ուորհոլ, «Բրիլոյի արկղը» ...): Այստեղ բացակայում է ստեղծագործական մտածողությունը: Սա արվեստի մեզ ռադիկալ հեղաշրջում է:

Շոկ-արթը ևս ժամանակակից արվեստի տեսակ է: Ինչպես արդեն ենթադրում ենք անվանումից, այն միտում ունի դիտողի մոտ շոկ առաջացնել: Պյերո Մանձոնին (շոկ-արթի հիմնադիրներից մեկը) լցրել է փուչիկները «արվեստագետի շնչով», իր ցուցահանդեսների այցելուներին առաջարկել է հավի ձվեր՝ իր մակագրությամբ, որպեսզի սննդի պատրաստման գործընթացում ևս լինի գեղարվեստական շունչ: 1961 թվականին հսկայական արժեքով վաճառել է «Նկարչի կեղտը» անվանմամբ «արվեստի գործը»:

Մեծ ճանաչում ունի **սուպերմատիզմի** հիմնադիր Կազիմիր Սլերի-նովիչ Մալևիչի «Մև քառակուսին»: Այն աշխարհում ամենահայտնի և ամենաքննարկվող նկարներից է, որը մեկնաբանվում է որպես բացարձակ դատարկություն, սև անցք: Հեղինակն ասում է, որ այս աշխատանքը ստեղծելիս չի կարողացել ո՛չ քնել և ո՛չ էլ ուտել և ինքն էլ չի հասկանում, թե ինչ է արել:

Կարող ենք բազմաթիվ իմաստներ վերագրել այս գործերին, բայց արդյո՞ք չենք տրվում խաբկանքին: Հիշենք դանիացի գրող Հանս

Քրիստիան Անդերսենի «Թագավորի նոր զգեստը» հեքիաթը, երբ միայն փոքրիկ տղան, նկատելով թագավորի մերկությունն, ասաց. «Բայց չէ՞ որ թագավորը մերկ է» [6]: Մտածել ստիպող հեքիաթ է: Գալիս ենք եզրահանգման. *մենք նման ենք հեշտ կառավարվող ամբոխի:*

Գեղագիտական դաստիարակության մակարդակի բացահայտում իրականացնելու նպատակով մենք ընտրել ենք Սուխանովայի ախտորոշման հետևյալ մեթոդները. հարցում, անավարտ նախադասություններ և գեղարվեստական-արտահայտիչ վերլուծության թեստ: Այս ախտորոշումների միջոցով ուսումնասիրվել և հարցվել են Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թվով 6 դպրոցների ավելի քան 300 աշակերտներ: Ստորև ներկայացնենք հետազոտությունների արդյունքները:

Ախտորոշում I – Հարցում

Ախտորոշման **նպատակն է** բացահայտել վաղ դեռահասության (10-13 տ.) և ուշ դեռահասության (13-18 տ.) տարիքի սովորողների գեղագիտական դաստիարակության մակարդակը: **Վաղ դեռահասության տարիքի, ուշ դեռահասության տարիքի գեղագիտական դաստիարակության մակարդակի բացահայտում՝ ըստ Սուխանովայի:**

Հարցաթերթ 1 (տե՛ս հավելված 1-ում)

Ըստ հարցաթերթիկի պատասխանների՝ ուշ դեռահասության տարիքի սովորողների մոտ ախտորոշվեց գեղագիտական դաստիարակության միջին մակարդակ, որը բնութագրվում է գեղագիտական երևույթների նկատմամբ ոչ կայուն հետաքրքրությամբ: Դատողություններն ու վերլուծությունները չեն առանձնանում իրենց գեղագիտական հասունությամբ: Ուշ դեռահասության տարիքին պատկանող հարցվողների 70 %-ը հետաքրքրվում է շրջապատող իրականության գեղագիտությամբ (արվեստի գործեր, երաժշտություն, բնության երևույթներ): 40 %-ը քննելուց առաջ հիշում է այն վայրերը, որոնք տպավորվել են (թանգարաններ, թատրոններ, համերգներ և այլն), 70 %-ին դուր է գալիս ունկնդրել բնության ձայները (թռչունների դայլալ, տերևների խշխշոց, առվակների քչքչոց): 30 %-ը հաճախում է գրադարաններ: Սակայն միայն 20 %-ն է կարդում մշակույթի մասին գրականություն: Հարցաթերթիկի ամբողջացված արդյունքները ներկայացված են հավելված 1-ում:

Վաղ դեռահասության տարիքի սովորողների մոտ ախտորոշվեց գեղագիտական դաստիարակության բարձր մակարդակ: Այն է. վառ արտահայտված հետաքրքրություն գործունեության գեղագիտական տեսակ-

ների նկատմամբ: Հարցվողների 90 %-ը հետաքրքրվում են շրջապատող իրականության գեղագիտությամբ (արվեստի գործեր, երաժշտություն, բնության երևույթներ): 72 %-ը քննելուց առաջ հիշում են այն վայրերը, որոնք իրենց տպավորել են (թանգարաններ, թատրոններ, համերգներ և այլն), 80 %-ին դուր է գալիս ունկնդրել բնության ձայները (թռչունների դայլալ, տերևների խշխշոց, առվակների քջջոց): 60 %-ը հաճախում է գրադարաններ: 52 %-ը կարդում է մշակույթի մասին գրականություն: Հարցաթերթիկի ամբողջացված արդյունքները ներկայացված են հավելված 2-ում:

Ախտորոշում 2 – Անավարտ նախադասություններ

Ախտորոշման նպատակն է գեղագիտական մշակույթ հասկացության նկատմամբ ընդհանուր հայացքների բացահայտումը: Այն պարզում է գեղագիտական մշակույթ հասկացության մասին գոյություն ունեցող ընդհանուր կարծիքները: Երեխաներին ներկայացվել են ութ անավարտ նախադասություններ, որոնք պիտի շարունակեին:

Մշակերտների պատասխաններն ընթերցելով և ի մի բերելով՝ եկանք այն եզրահանգման, որ նրանց մոտ գերակշռում է գեղագիտական դաստիարակության միջին մակարդակը: Այն է. գեղագիտական գործունեության նկատմամբ դրական վերաբերմունք, հետաքրքրություն, որը դրսևորվում է դեպի գեղագիտական առարկաներ, օբյեկտներ և շրջապատող իրականության երևույթներ:

Ախտորոշում 3 – Արտահայտիչ վերլուծության թեստ

Ախտորոշման նպատակն է բացահայտել սովորողների հուզական պատկերացումների զարգացման մակարդակը: Այս նպատակով հարցվել են մեր կողմից ընտրված տարբեր դպրոցների վեց դասարաններից 164 աշակերտներ: Երեխաներին ներկայացրել ենք հայտնի երեք գեղանկարների կրկնօրինակներ, որոնցում պատկերված էին երեխաներ: Սովորողները պետք է դիտեին նկարները, բանավոր խոսքով ներկայացնեին նկարներում պատկերված երեխաներին և վերջում պատասխանեին մի քանի հարցերի: Սովորողների հուզական պատկերացումների զարգացման մակարդակի ախտորոշման արդյունքները տե՛ս հավելված 5-ում:

Լսելով սովորողների պատկերացումները, դատողությունները՝ եկանք այն եզրահանգման, որ դասարաններում կա գեղագիտական դաստիարակության **բարձր մակարդակ**, այն է. երեխան հստակ և դիպուկ որսում է հերոսների տրամադրությունները, ազատ և ընդարձակ պատ-

մում է այդ երեխաների բնավորությունների մասին, պատկերացնում է նրանց հետագա քայլերը:

Կրթության հումանիզացման և ազատականացման գործընթացները, որոնք այսօր գլոբալ բնույթ են կրում, ամբողջ աշխարհում առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացրել թանգարանային մանկավարժության, ինչպես նաև ժամանակակից թանգարանի գիտական և պրակտիկ գործունեության հանդեպ: Օգտագործելով արվեստի գործերը՝ թանգարանը, որպես ուսուցման հիմնական միջոց, կարող է զարգացնել անձի պատմական գիտակցությունը, միջանձնային հաղորդակցությունը, տեսողական մտածողությունն ու ստեղծագործական ունակությունները [7]:

Ներկայացնենք Վանաձորի կերպարվեստի թանգարանի «Թանգարանը դպրոցում» կրթական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս մեր համայնքում բնակվող երեխաներին թանգարանից տարված ստեղծագործությունների միջոցով բարձրացնել գեղագիտական ճաշակը: Այս կրթական ծրագրով այցելել ենք ավելի քան 30 դպրոցներ: Կրթական բազմաբնույթ ծրագրերի ընթացքում իրականացվել են թեմատիկ էքսկուրսիաներ, զրույց-համերգներ, դասախոսություններ, վիկտորինաներ, քննարկումներ, խաղեր և այլն: Այսինքն՝ օգտագործվել են թանգարանային մանկավարժության դասական և ինտերակտիվ ձևերը (կրթական ծրագրի ընդհանուր բնութագրությունը տե՛ս հավելված 6-ում):

Որպես ուսումնասիրության մեթոդ ընտրեցինք նաև հարցախույզը: Վանաձորի կերպարվեստի թանգարանում շրջայցերի ընթացքում կազմակերպված հարցախույզի ուսումնասիրության օբյեկտ հանդիսացան երկու տարիքային խմբեր՝ վաղ դեռահասության տարիք և ուշ դեռահասության տարիք: Հարկ ենք համարում նշել, որ հարցվել են նաև ներկա գտնվող ծնողները և ուսուցիչները: Թանգարանային զբոսայցն ավարտելուց հետո յուրաքանչյուր խմբին տրվեցին հետևյալ երկու հարցերը.

- Հաճախ եք այցելում թանգարաններ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
- Մասնակցո՞ւմ եք «Թանգարանային գիշեր» միջոցառմանը:

Ըստ պատասխանների կարելի է եզրակացնել, որ հիմնականում կրթական կառույցների՝ այս դեպքում դպրոցի նախաձեռնությամբ է կազմակերպվում այցելություն դեպի թանգարան: Առաջարկում ենք ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնց միջոցով շոշափելի կլինի հետևյալ արդյունքը՝ թանգարանը կդառնա հետաքրքիր և գրավիչ երեխաների համար: Խնդրի լուծում կարող է լինել թանգարանին ժամանակակից տեխնոլո-

գիաներով (աուդիոգիդ, տեղեկատվական կրպակ, VR ակնոցներ և այլն) գինելը: 2-րդ հարցին տրված պատասխանները փաստում են, որ թանգարան չայցելելու պատճառներից է նաև զբաղվածությունը: «Թանգարանային գիշեր» միջոցառումը տեղի է ունենում տարվա մեջ մեկ օր՝ մայիսի 18-ին, և տարվա մեջ միայն այդ օրն է, որ թանգարանները բաց են մինչև կեսգիշեր: Շատ մարդիկ, ովքեր զբաղվածության պատճառով չեն այցելել թանգարաններ, այդ օրն այցելում են և լրացնում իրենց բացթողումները:

Լիարժեք գործելու համար պետք է ամրացնել թանգարան-դպրոց փոխհարաբերությունը, որն էլ կօգնի ստեղծել թանգարանի և այցելուի միջև անմիջական կապ՝ նպաստելով բազմակողմանի զարգացած ու ներդաշնակ հասարակության կայացմանն ու թանգարանային գործի կազմակերպման արդյունավետությանը:

Գրականություն

1. Шадриков В. Д. Психология деятельности и способности человека. М., 1996.
2. Балашов В. А. Вопросы эстетического образования и эстетики: Автореф. дис. доктора пед. наук. Казань, 1990.
3. Сухомлинский А. Педагогика: научно-теоретический журнал. М., 2007. С. 3-12.
4. Харламов И. Ф. Педагогика. М.: Гардарики, 1999. - 520 с. С. 250-251.
5. Харламов И. Ф. Педагогика. М.: Гардарики, 1999. 311 с.
6. Андерсен Ганс Христиан. Сказки, рассказанные детям. Новый наряд короля (сказка, перевод А.В. Ганзен, П. Ганзена), 1983.С. 68-71.
7. Столяров Б. А. Музей как образовательная среда//Музейная педагогика. Междисциплинарные диалоги. СПб: «Специальная литература», 1998, 96 с.


ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1


№	Հարց	Այո	Երբեմն	Ոչ
1	Երբ պատկում ես քնելու, հիշում ես արդյոք այն վայրերը, որոնք քեզ դուր են եկել (թանգարաններ, թատրոններ, համերգներ և այլն):			
2	Սիրո՞ւմ ես արդյոք հորինել իրականության մեջ գոյություն չունեցող հերոսներ և պատմություններ նրանց մասին:			
3	Քեզ դուր է գալիս լսել բնության ձայները. թռչունների դայլալ, տերևների խշխշոց, ավակների քչքչոց:			
4	Կարո՞ղ ես արդյոք պատկերացնել հետևյալ տեսարանը. կանաչ դաշտ, արևային տաք եղանակ, շատ կակաչներ, զբոսնող մայր և որդի, հեռվում տնակ, պարզ երկինք:			
5	Քեզ դուր է գալիս պատմել քո ծնողներին այն ամենի մասին, ինչը քեզ հուզում է (ֆիլմի մեջ, գրքի մեջ, երաժշտության մեջ):			
6	Հաճախ՞ում ես գրադարան:			
7	Քեզ լավ է գգում, երբ մաքուր ես հագնված:			
8	Քո համադասարանցիների հետ շփման ընթացքում քաղաքավարի ես:			
9	Մշակույթի մասին որևէ գրականություն կարդո՞ւմ ես:			
10	Համացանցում օգտվո՞ւմ ես այնպիսի հարթակներից, որտեղ պատմում են դասական երաժշտության և գեղանկարչության մասին:			

Արդյունքները հաշվվել են ըստ պատասխանների	Արդյունքների մշակումը տեղի է ունեցել ելնելով հետևյալ ցուցումներից
«այո» – 3 միավոր	30-21 միավոր – բարձր մակարդակ
«երբեմն» – 2 միավոր	20-11 միավոր – միջին մակարդակ
«ոչ» – 1 միավոր	10 և ավելի ցածր միավոր – ցածր մակարդակ

Հավելված 2



Հավելված 3



Հավելված 4

1. Լավ կյանքը ...
2. Ես ամենալավն ինձ զգում եմ, երբ ...
3. Ես ինձ լավ եմ զգում, երբ իմ շուրջը ...
4. Ինձ դուր է գալիս նայել ...
5. Ես սիրում եմ հաճախել (գնալ) ...
6. Ես տեսնում եմ գեղեցիկը ...
7. Ինձ դուր է գալիս, երբ իմ նկարած նկարները ...
8. Բարին ինձ համար ...

Հավելված 5

Դասարան	Մասնակիցների քանակ	Բարձր մակարդակ	Միջին մակարդակ	Ցածր մակարդակ
4-րդ դասարան	42 աշակերտ	✓		
5-րդ դասարան	23 աշակերտ	✓		
6-րդ դասարան	23 աշակերտ	✓		
8-րդ դասարան	25 աշակերտ			✓
8-ա դասարան	23 աշակերտ	✓		
9-բ դասարան	28 աշակերտ		✓	

Օրագիրը նախատեսված է դպրոցական երեխաների համար

Ժամանակակից աշխարհում երեխան շրջապատված է թվային տեխնոլոգիաներով, նա զուրկ է մնում արվեստի հետ կենդանի շփումից, դա ավելի վառ է արտահայտվում գյուղական համայնքներում բնակվող երեխաների մոտ, տվյալ կրթական ծրագիրը հնարավորություն կտա մեր համայնքի գյուղերում բնակվող երեխաներին թանգարանից տարված ստեղծագործությունների միջոցով բարձրացնել գեղագիտական ճաշակը, հասկանալ շրջապատող աշխարհի գեղեցկությունը:

Մասերը լրացուցիչ տեղեկություններ կստանան կերպարվեստի մասին:

Այս նպատակից սկիզբ է առնում կրթական ծրագրի խնդիրը.

- ձևավորել հետաքրքրություն կերպարվեստի նկատմամբ,
- զարգացնել բարոյագեղագիտական զգացմունքներ, սեր հայրենի բնության, հայրենիքի, ավանդույթների նկատմամբ,
- զարգացնել կերպարվեստի հանդեպ էմոցիոնալ ընկալում,
- ընդլայնել կերպարվեստի մասին գիտելիքները,
- նպաստել գյուղական դպրոցների աշակերտների ակտիվ մասնակցությանը մշակութային կյանքին:

Օրագրի խնդիրները

- ծանոթացնում կերպարվեստի պատմությանը՝ համառոտ,
- հարցախույզ աշակերտների՝ կերպարվեստի մասին պատկերացումների մասին,
- ծանոթացում տարված ստեղծագործության հեղինակի հետ, կենսագրական և ստեղծագործական ուղու մասին տվյալներ,
- ստեղծագործություն մեկնաբանում, տեղեկություններ տվյալ ստեղծագործության ժանրի վերաբերյալ,
- հարցախույզ՝ թեմայի ըմբռնման վերաբերյալ:

Необходимость эстетического воспитания учащихся в современных условиях

Александия Арпине

Факультет социальных наук,

«Школьная педагогика и методика»,

руководитель магистерской диссертации:

к. пед. наук., доцент Л. Багдасарян

Резюме

Ключевые слова: *культура, научно-технический рост, развитие личности, мировоззрение*

Статья является попыткой выявления эстетического уровня учащихся в условиях «современного искусства».

Для выявления уровня эстетического воспитания учащихся мы организовали опрос, который провели в шести разных школах города Ванадзор. Как метод диагностики были выбраны художественно-экспрессивный тест, анкетирование каждого учащегося, недописанный тезис (незаконченное предложение) М. В. Сухановой. В следствии исследования мы пришли к выводу, что у учащихся ярко выражено желание, позитивное отношение к эстетической деятельности, интерес, проявляемый к эстетическим предметам, объектам и явлениям окружающей действительности.

В современном мире ребенок окружен цифровыми технологиями в следствии чего общение с искусством вживую становится минимальным. Это наиболее выражается у детей живущих в сельских местностях. В связи с этим в 30 школах лорийской области была проведена образовательная программа «Музей в школе». Данная образовательная программа дала возможность поднять уровень эстетического вкуса у детей, живущих в деревнях лорийской области. Учащиеся получают дополнительные знания об изобразительном искусстве.

Также было выявлено, что использование современных технологий (аудиогид, информационный киоск, VR очки и т. д.) укрепляет связь между школой и музеем.

Результаты проведенного исследования являются основой для понятия продуктивности эстетического воспитания учащихся в актуальных условиях.

The Significance of Aesthetic Education of Learners in Modern Conditions

Aleksanyan Arpine

Faculty of Social Sciences,

“School Pedagogy and Methodology”,

Academic Supervisor: L. Baghdasaryan

PhD in Pedagogy, Associate Professor

Summary

Key words: *culture, scientific and technical growth, personality development, worldview*

The article is an attempt to identify the aesthetic level of learners in the conditions of “Modern Art”.

To identify the level of aesthetic education of learners, we organized a survey, which we conducted in six different primary schools of Vanadzor. We have used the diagnostic method of Sukhanova M. V. As a result of research, we have come to the conclusion that learners have a clearly expressed interest in aesthetic types of activities.

In the modern world, the child is surrounded by digital technologies, one is deprived of personal contact with art, which is more vividly expressed among the children living in rural communities. For this purpose, we have implemented an educational program "Museum at School" in 30 primary schools of Lori region. This educational program enables the children, living in the villages of Lori region, to increase their aesthetic taste and understand the beauty of the surrounding world by the works/ exhibits from the museum. As a result children got more information about fine arts.

The survey method gave us an opportunity to find out that the implementation of modern technologies (audio guides, information terminals, VR glasses and etc.) strengthens the cooperation between the Museum and School.

The results of this survey are the basis for understanding the effectiveness of aesthetic education in modern conditions.

Գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններն ու միջոցները կրտսեր դպրոցում

Մուրադյան Լուսինե

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»,
մագիստրոսական թեզի դեկավար
մ. գ. թ., դրոցենտ Ա. Հարությունյան*

Հանգուցային բառեր. *գեղագիտական դաստիարակություն, կրտսեր դպրոցական, գեղեցիկ, ճաշակ, գեղագիտական մշակույթ, առանձնահատկություններ, միջոցներ, ուսումնական առարկաներ*

Ներածություն: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկը տեսնելու, նրանով հիանալու և ներշնչվելու զգացում: Եվ այդ զգացումը կազմել է նրա հոգևոր աշխարհի մի մասը: Գեղեցիկը հասկացություն է, որը բնութագրվում է իրականության մեջ, այն արվեստում դրսևորվող գեղագիտական բարձրագույն արժեքն է, որին մարդը ձգտել է իրեն և շրջակա աշխարհը ճանաչելու ու բացահայտելու ամբողջ ընթացքում: Գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ *aisteticos*-զգայությանը ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից 1752 թ.), սակայն որպես գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում [2, 306]:

Նպատակը: Բացահայտել և ներկայացնել ուսումնական գործընթացում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններն ու միջոցները:

Խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակության վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Բացահայտել գեղագիտական դաստիարակության իրականացման առանձնահատկությունները տարրական դպրոցում:
3. Վեր հանել և ներկայացնել գեղագիտական դաստիարակության միջոցները տարրական դպրոցում:

4. Թեմայի շուրջ կատարել հետազոտական աշխատանք և վերլուծություն:

1. Գեղագիտական դաստիարակության էությունը

Գեղագիտական ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով:

Ինչ է գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ չկա միասնական մոտեցում, և տարբեր հեղինակների կողմից այն տարբեր կերպ է բնորոշվում, քանի որ գեղեցիկի ու դաստիարակության բնորոշման հարցերում նույնպես կա ոչ միասնական մոտեցում: Կարող ենք տալ հետևյալ սահմանումը. «Գեղագիտական դաստիարակությունը գործընթաց է, որն ուղղված է երեխաների մոտ գեղեցկության, ճաշակի և գեղագիտական արժեքների զգացողության ձևավորմանը: Այն ներառում է ծանոթություն արվեստի, երաժշտության, գրականության և մշակույթի այլ ձևերի հետ, ինչպես նաև նպաստում է հուզական և էսթետիկ ինտելեկտի ձևավորմանը»:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Կա նաև տեսակետ, ըստ որի՝ գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաս-

տիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը: Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը:

2. Գեղագիտական դաստիարակության իրականացման առանձնահատկությունները տարրական դպրոցում

Խոսելով երեխայի մասին՝ նշենք, որ գեղագիտական դաստիարակությունը նպատակաուղղված է ոչ միային նրա մեջ զարգացնելու, ձևավորելու գեղագիտական ճաշակ, գեղագիտական արժեքներ և փոխհարաբերություններ, այլև ներառում է մի շարք փոխկապակցված հասկացություններ՝ գեղագիտական մտածողություն, գործունեություն, ըմբռնումներ և այլն: Բացի այդ՝ գեղագիտական դաստիարակությունը երեխայի մեջ առաջացնում է նաև գեղագիտական հետաքրքրություն: Վերջինս հուզական, կամային և մտավոր գործընթացների միասնությունն է, որում անպայմանորեն առկա է ճանաչողական սկզբունք, քանի որ, երբ ինչ-որ բան հետաքրքիր է, մարդն ակամա ձգտում է դրա մասին ավելի շատ բան իմանալ:

Դեռ վաղ մանկական հասակում ծնողները պետք է երեխայի մեջ ներդնեն սեր գեղեցիկի նկատմամբ, սովորեցնեն նրան նկատել ու գնահատել բնության յուրքանյուր մասնիկ, լսել թռչունների երգը, հետևել ծանոթ կենդանու շարժին: Միայն նման կերպ է հնարավոր դաստիարակել ինքնաբավ, ազատ ու երջանիկ անհատ, ով ունակ է երջանկանալու ու երջանկացնելու:

Ինչ վերաբերում է տարրական դպրոցի աշակերտին, ապա 1-ին և 2-րդ դասարաններում նրա համար «Ուսուցիչն ամենակարևոր մարդն է: Նրա համար ամեն ինչ սկսվում և ավարտվում է ուսուցչի խոսքերից և վարվեցողությունից: Դրա միջոցով կրտսեր աշակերտը ծանոթանում է աշխարհին, սոցիալական վարքագծի համընդհանուր ճանաչված չափանիշներին, և ուսուցչի հայացքները, ճաշակը, նախասիրությունները հաճախ դառնում են նրա անձնականը» [12]:

Գեղագիտական դաստիարակությունը կրտսեր դպրոցականի կյանքում առանձնահատուկ տեղ է զբաղում: Այն իրականացվում է՝ հաշվի առնելով վերջիններիս տարիքային ու անհատական առանձնահատկությունները: Հետևաբար՝ կարևոր է դիտարկել տվյալ տարիքին բնորոշ կազմաբնախոսական, նյարդահոգեբանական, ֆիզոլոգիական որոշ

առանձնահատկություններ: Ս. Խուդոյանը նշում է, որ ըստ Լ. Ս. Վիգորսկու՝ երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները, ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ, ի հայտ է գալիս ապրումների սուր պայքար [5, 43]:

«Գեղագիտական դաստիարակության կարևոր խնդիրն է, որ կրտսեր դպրոցականի մեջ զարգանա գեղագիտական ընկալումն ու դիտողունակությունը, որոնք և հնարավորություն կտան նրան տեսնելու, ճանաչելու, հասկանալու իրականության հատկությունները՝ գեղեցիկը, վեհը, հերոսականը, ողբերգականը, կոմիկականն ու դրանք տարբերելու հակազեղագիտականից ստորից, հրեշավորից» [4, 80]:

Առաջին դասարանցին, ով ընդունվել է ուսումնական հաստատություն, բոլորովին նոր տեղ է գրավում մարդկանց փոխհարաբերությունների համակարգում նա նոր պարտականություններ ունի՝ կապված կրթական գործունեության հետ: Նրա մոտ, հոգեկանի զարգացմանը համահունչ, ծնվում են մտավոր նորագոյացություններ, որոնք բնութագրում և կարևորում են արժեքները և կրտսեր աշակերտների զարգացման գործում հանդիսանում են այն հիմքը, որն ապահովում է տվյալ տարիքային սահմանում անհատի զարգացումը: Ավելին, նրա մտքում դրվում են կոնկրետ բարոյական, վարքային չափանիշներ, նա սկսում է ընկալել դրանց նշանակությունն ու անհրաժեշտությունը: Ուստի այս տարիքը անհատականության զարգացումն ու գեղագիտական ճաշակի ձևավորումը արդյունավետ կազմակերպելու կարևորագույն շրջան է և կախված է մեծահասակի խնամքից ու գիտակից մոտեցումից:

Բնության, շրջապատի մարդկանց և իրերի գեղեցիկ լինելու փաստի զգացումը աստիճանաբար կրտսեր դպրոցականի մոտ ստեղծում է հատուկ հուզական և հոգեկան վիճակներ, կյանքի նկատմամբ առաջացնում է կոնկրետ ուշադրություն, սրում հետաքրքրասիրությունը, մտածողությունը, հիշողությունը: Զգայական ուժեղ բռնկումները երկար ժամանակ պահվում են հիշողության մեջ, հաճախ վերածվում են վարքի դրդապատճառների և պարզեցնում համոզմունքների ձևավորման գործընթացը, վարքը և սովորությունները: Նախադպրոցական և վաղ դպրոցական տարիքը կյանքի այն շրջանն է, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի զգայական փորձի հսկայական աճ ու կարգավորում, ընկալման ու մտածողության տիրապետում և երևակայության բուռն զարգացում, ինչպես նաև կամաձին ուշադրության և իմաստալից մտապահման տարրերի ձևավորում [10, 67-68]: Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք եզրակացնել, որ կրտսեր սովորողները համարվում են գեղագիտական

դաստիարակության արդյունավետ օրյեկտ:

Գեղագիտական դաստիարակությունը հիմնարար է կրտսեր աշակերտի անհատականության հետագա լիարժեք ձևավորման համար, այն կոչված է զարգացնելու գեղարվեստական ճաշակը, զինում է մարդուն, ներդաշնակեցնում, զարգացնում է կարողություն՝ հասկանալու, ճիշտ գնահատելու և արժևորելու գեղեցիկն ու արժեքավորը կյանքում և արվեստում: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի՝ գեղեցիկը տեսնելու և արժևորելու հմտությունների զարգացմանը և գեղեցիկ միջավայրում ապրելու պահանջմունքի ձևավորմանն ու զարգացմանը:

3. Գեղագիտական դաստիարակության միջոցները կրտսեր դպրոցական տարիքում

Գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է ամբողջ դասի ընթացքում՝ բոլոր առարկաների դասավանդման ժամանակ [3]: Անդրադարձ կատարենք որոշ ուսումնական առարկաների.

Մայրենիից նախաայբբենական շրջանում «Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ», «Ընչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր» բնույթի առաջադրանքները նպատակաուղղված են երեխայի խոսքի, երևակայության զարգացմանը, նրան մղում են ճանաչելու առարկաները և դրանց հատկանիշները [11, 15]:

Այբբենարանում ընդգրկված մի շարք թեմաներ և գործնական բնույթի նյութեր ունեն հուզական, գեղագիտական, դաստիարակչական ուղղվածություն:

Մայրենիի տարրական դպրոցի դասագրքերում զետեղված նյութերը միտում ունեն ոչ միայն գրավիչ ու հետաքրքիր հնարքներով, բազմաբնույթ առաջադրանքներով, զվարթ պատմություններով, խնդուկներով ու բառախաղերով, առածներով ու հանելուկներով իրականացնելու ուսուցողական և դաստիարակչական նպատակներ, այլև բանավոր և գրավոր խոսքի միջոցով ուսուցումը դարձնելու արագ, հեշտ ու արդյունավետ, երեխաներին մղելու տեսելու գեղեցիկը, բարին, զարգացնելու դրանք, գնահատելու կարողությունները:

Իսկ գեղարվեստական գրականությունը թեկուզև անմիջական կապ չունի բնության հետ, սակայն վերջինիս ուսուցման միջոցով հնարավոր է աշակերտի համար տեսանելի դարձնել բնության գեղեցկությունները [9, 12]:

«Կերպարվեստ» առարկան սովորեցնում է գործնական աշխատանքով արտահայտել սեփական զգացմունքները, դատողություններն ու գեղագիտական վերաբերմունքը գեղեցիկի նկատմամբ: «Կերպարվեստ»

առարկայի ծրագրային նյութերից է նաև կազմակերպել դաս-գրույցներ նկարչության մասին և ցուցադրել նկարների վերատպություններ:

«Երաժշտությունը» կրտսեր դպրոցականի մեջ նույնպես ձևավորում է գեղագիտական զգացողություն, երաժշտական գիտելիքներ, որը ավելի է դյուրացնում երաժշտական նրբերանգների ընկալումը: Տարբեր ստեղագործությունների ունկնդրման ու կատարման միջոցով երեխանները ևս մեկ անգամ համոզվում են, որ երաժշտությունը կարող է արտահայտել միաժամանակ տարբեր տրամադրություններ և տարբեր հոգեհուզական վիճակներ՝ երջանկություն, բնության ամենատարբեր երևույթների նկարագրություն, ուրախություն, հուզմունք: Վ. Ա. Մուխոմսկին գրում է «Ձեռքը ջութակ վերցնող մարդը չի կարող վատ բան կատարել» [8, 3-4]:

«Տեխնոլոգիա» առարկան նպատակաուղղված է միջավայրը գեղեցիկ և հարմարավետ դարձնող օգտակար իրերի ստեղծմանը, գեղագիտական արժեքների ընկալմանը և գնահատմանը, կարողությունների զարգացմանը: Այս առարկան երեխաններին սովորեցնում է ստեղծագործել, վերահսկել սեփական աշխատանքը, հասկանալ և ընկալել առարկայական աշխարհը, գնահատել շրջապատի գեղեցկությունը, պատրաստել գեղեցիկ և գունագեղ առարկաններ՝ պահպանելով չափերը, ձևը, գույնը և ձևավորումը:

«Տեխնոլոգիա» առարկան նաև երեխանների բազմակողմանի զարգացման հիմքն է, այսինքն՝ գեղագիտական, մտավոր, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությունների զործուն միջոց է: «Մաթեմատիկա»-ի և գեղագիտական արժեքների միջև առկա են խորքային կապեր, որոնք դրսևորվում են երաժշտության, նկարչության, ճարտարապետության և արվեստի այլ բնագավառներում մաթեմատիկայի լայն կիրառություններով [6]: Ինչպես նաև մարդկային խոսքի այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են հիմնավորվածությունը, տրամաբանական խստությունը և ապացուցվածությունը, որոնք գիտական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշներ են, իրենց լիարժեք դրսևորումը ստանում են հենց մաթեմատիկայում [7]:

Դպրոցում գեղագիտական միջոցները կամ համակարգը շատ ընդարձակ են: Այդ համակարգի մեջ կարելի է դասել իմացությունը, ուսումնական բոլոր առարկաները, խաղը, ուսումնական աշխատանքը, ինքնագործունեությունը, գեղարվեստական գրականությունը, բնությունը, թատերական արվեստը և այլն, որոնք առանձին-առանձին մեծ դեր են խաղում սովորողների գեղագիտական դաստիարակության զարգացման գործում [1, 370]:


Ամփոփելով նշենք, որ գեղագիտական դաստիարակության էությունը խորքային ըմբռնում ունի ու հնարավորություն է տալիս դաստիարակել բնության հետ ներդաշնակ ապրող, լիարժեք ու ինքնաբավ պատանի, և հենց նա էլ առողջ հասարակության հիմքն է:

Հետազոտական աշխատանք և արդյունքների վերլուծություն

Թեմայի շուրջ կիրառել ենք հարցաթերթիկի մեթոդը. այն բաղկացած է 5 հարցից, յուրաքանչյուր հարցի վերլուծությունը ներկայացված է ստորև:


Հարցմանը մասնակցել են տարբեր դպրոցների թվով 30 դասվարներ:

1. Ըստ Ձեզ գեղագիտական դաստիարակության նշված միջոցներից որո՞նք են առավել կարևոր տարրական դասարաններում (կարող եք ընտրել մինչև 3 տարբերակ).




Գծապատկերից պարզ է դառնում, որ 50%-ի շեմը հասել են խաղը, բնությունը և աշխատանքը:

2. Ո՞ր առարկաներն են հիմնականում նպաստում տարրական դասարանների աշակերտների գեղագիտական դաստիարակությանը (կարող եք ընտրել մինչև 3 տարբերակ).




Հարցվածների 93 %-ը գտնում է, որ տարրական դասարանների աշակերտների գեղագիտական դաստիարակությանն առավելապես նպաստող առարկաներից է կերպարվեստը: Քիչ չեն նաև մայրենի, երաժշտություն և տեխնոլոգիա առարկաները կարևորողները: Սակայն, ինչպես տեսնում ենք, ֆիզկուլտուրա առարկայի ցուցանիշը 0 % է, ինչից կարող ենք գալ այն եզրահանգման, որ տարրական դասարաններում ընդհանուր առմամբ ֆիզկուլտուրա առարկայի կարևորության գնահատումը ցածր մակարդակի վրա է, որի արդյունքում տուժում են երեխաների դաստիարակության մի շարք կարևոր կողմեր՝ կախված առավելապես գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակությունների հետ:

3. Ի՞նչ խոչընդոտներ կան տարրական դպրոցում սովորողների գեղագիտական դաստիարակությանն առնչվող հարցերում (կարող են ընտրել մինչև 2 տարբերակ).




Այն խոչընդոտը, որն այս հարցի շրջանակներում ամենաշատն է նշվել դասվարների կողմից, ցավոք սրտի, ազդեցություն ունի դպրոցում ուսուցչի հետ կապված ցանկացած ոլորտի հետ:

4. Ո՞ր գործոններն են նպաստում գեղագիտական դաստիարակությանը դպրոցում (նշել մինչև 2 տարբերակ).



Իսկ այս հարցի արդյունքներից պարզ է դառնում, որ կան նաև գեղագիտական դաստիարակությանը նպաստող գործոններ: Տարբերակներից գերակշռող արդյունք ունեն գեղարվեստական միջոցառումներին մասնակցելու հնարավորությունների ապահովումը, ինչպիսիք են մրցույթները, ցուցահանդեսները ու համերգները, ինչպես նաև ստեղծագործական գործընթացում համագործակցությունը և թիմային աշխատանքին դպրոցի տեղ տալը:

5. Ըստ Ձեզ, դպրոցում երեխաների մոտ առողջ գեղագիտական ճաշակի ձևավորումը՝ որպես կրթաց աշխարհընկալման մի մաս, ի՞նչ մակարդակով է տեղի ունենում.



Ամփոփելով հետազոտական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում գեղագիտական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներն ու առկա ծրագրերը դեռևս չեն ապահովում ցանկալի արդյունք, սակայն առավել հետևողական և պատասխանատու մանկավարժները ցանկության դեպքում ի գործու են իրենց սաների մոտ ձևավորել գեղագիտական դաստիարակվածության ավելի բարձր մակարդակ:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Մանկավարժ, 2005:
2. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ., Ասատրյան Մ. Ա., Գևորգյան Մ. Մ., Կարապետյան Ն. Ջ., Բաղդասարյան Ա. Ա., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), Երևան, 2017:
3. Ավագյան Ք., Գեղազիտական դաստիարակությունը մաթեմատիկայի դասերին, Նախաշավիղ, № 4, 2013:
4. Բայյան Ա. Ա., Դպրոցականների գեղազիտական դաստիարակությունը, Երևան, «Լույս» հրատ., 1979:
5. Խուրոյան Ս. Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, «Ջանգակ-97» հրատ., 2004:
6. Միքայելյան Հ. Ս., Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթությունը, մաս 2, «Էդիթ Պրինտ», Երևան, 2015:
7. Միքայելյան Հ. Ս., Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Երևան, «Էդիտ պրինտ», 2003:
8. Յուզբաշյան Յու. Վ., Փահլևանյան Ա. Ա., Երաժշտություն 1-4-րդ դասարաններում (ուսուցչի մեթոդական ձեռնարկ), Երևան, 2001:
9. Պապիկյան Կ., Գեղազիտական դաստիարակությունը տարրական դպրոցում, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, № 8, 2012:
10. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977:
11. Սարգսյան Վ. Ա., Այբբենարան: Մեթոդական ձեռնարկ: Երևան, 2006:
12. Лёвина А.А. Особенности эстетического воспитания в младшем школьном возрасте, Тамбов, Гаудеамус, 2016.
<https://cyberleninka.ru/article/n/suschnost-esteticheskogo-vospitaniya-mladshih-shkolnikov/viewer>

Особенности средств эстетического воспитания в средней школе

Мурадян Лусине

*Факультет общественных наук,
“Школьная педагогика и методика”,
руководитель магистерской диссертации:
к. пед. н., доцент А. Арутюнян*

Резюме

Ключевые слова: эстетическое воспитание, младший школьник, красивый, вкус, эстетическая культура, особенности, средства, предметы обучения

В статье речь идет об особенностях и средствах эстетического воспитания в средней школе. В данной статье автор представляет изучение и анализ профессиональной литературы по эстетическому воспитанию в младшем школьном возрасте, раскрывает особенности реализации эстетического воспитания в начальной школе, подчеркивает средства.

В данной статье также представлены результаты исследовательской работы по данной теме и их анализ.

Features and Tools of Aesthetic Education in Junior School

Muradyan Lusine

*Faculty of Social Sciences,
“School Pedagogy and Methodology”,
Academic Supervisor: A. Harutyunyan
PhD in Pedagogy, Associate Professor*

Summary

Key words: aesthetic education, junior school pupil, beautiful, taste, aesthetic culture, features, means, teaching subjects

The article is about the features and means of aesthetic education in junior school. In this article, the author presents a study and analysis of professional literature on aesthetic education in junior school age, reveals the features of implementation of aesthetic education in elementary school, emphasizes its tools.

This article also presents the results of the research work on the given topic and their analysis.

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ**

**ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ И
СПОРТИВНЫЕ ТРЕНИРОВКИ**

**PHYSICAL EDUCATION
AND SPORTS TRAINING**

Ֆիզիկական կուլտուրայի դերն ու նշանակությունը ՄՄՈՒՀ-ի սովորողների ուսումնառության գործընթացում

Ալավերդյան Էլլադա

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար
մ. գ. թ., դոցենտ Վ. Նազարյան*

Հանգուցային բառեր. *ֆիզիկական կուլտուրա, սպորտ, ուսանող, ֆիզիկական վարժություններ, սպորտային խմբակներ*

Արդի ժամանակաշրջանում բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների հետ փոփոխվում է նաև տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման բովանդակությունը: Վերջինս առաջացնում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ վերանայելու մասնագիտական կրթության արդյունավետությունը բարձրացնող ճանապարհները:

Սովորողների ընտրած մասնագիտական գործունեության և նրա առանձին աշխատանքի տեսակների առարկայական պատրաստումը ներկայումս դարձել է ֆիզիկական դաստիարակության, կրթության և առողջապահության ոլորտի աշխատակիցների, մասնագետների խիստ ուշադրության առարկան:

Մանկավարժության, մասնավորապես ֆիզիկական դաստիարակության առջև այսօր ծառանում են կրթության ժամանակակից ձևերի գիտական հիմնավորման մի շարք խնդիրներ [1, 35; 2, 17]: Այդ ուղղություններից մեկն է սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը: Հայտնի է, որ տարբեր բնագավառի ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը գլխավորապես որոշվում է ուսումնական հաստատություններ ավարտողների աշխատանքային գործունեության բնույթով և առանձնահատկություններով [3, 67; 4, 77]: Հետևաբար, սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության գիտական հիմնավորումը և մշակումն ունի սոցիալ-տնտեսական և անձնակողմնորոշիչ նշանակություն [4, 117]:

Եթե ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հարցերը բավականաչափ խոր են ուսումնասիրված բարձրագույն կրթության համակարգում [3, 119; 4, 109], ապա միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների վե-

րաբերյալ ուսումնասիրությունները դեռևս անբավարար են մշակված [5, 11; 6, 33]: Հենց դրանով է կարևորվում տվյալ հետազոտության արդիականությունը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքի, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ սովորողների վերաբերմունքը և հետաքրքրության մակարդակը որոշելու և այդ ուղղությամբ աշխատանքների բարելավման նպատակով մեր կողմից մշակվեց հատուկ հարցաթերթիկ, որը բաղկացած էր 22 հարցից: Մոցիալ-մանկավարժական հետազոտություններն իրականացվել են Վանաձորի պետական բժշկական քոլեջում (150 ուսանող՝ բուժքույր, մանկաբարձ, դեղագործ), Վանաձորի Մ. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջում (220 ուսանող՝ նախադպրոցական կրթություն, հաշվապահական հաշվառում, հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում, համակարգչային գեղարվեստական նախագծում), Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում (250 ուսանող՝ կառավարում, շուկայաբանություն, առևտուր, հագուստի մոդելավորում և նախագծում, զբոսաշրջություն): Հետազոտությանը մասնակցել են ընդհանուր թվով 620 սովորողներ, որոնց ընդհանուր պատկերը տրված է աղյուսակ 1-ում:

Հարցվողների 30.5 տոկոսը ունեին գերազանց, 40.5 տոկոսը լավ և մնացած 29.5 տոկոսը բավարար առաջադիմություն: Բացահայտվեց, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների 37.5 տոկոսը հաճույքով են մասնակցում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերին, 42.6 տոկոսը ոչ միշտ է հաճույքով մասնակցում, իսկ մնացած 19.7 տոկոսը հաճույքով չեն մասնակցում ֆիզիկական կուլտուրայի դասերին, քանի որ, ըստ նրանց, չկան համապատասխան պայմաններ, յուրաքանչյուր դասին գրեթե միշտ նույն խաղն են խաղում, չեն պահպանվում հիգիենայի տարրական պայմանները: Նման պատասխանները բավականին լուրջ խորհելու տեղիք են տալիս և պահանջում են համապատասխան լուծումներ:

Որպես անբարենպաստ գործոն՝ նշում ենք, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների 62.4 տոկոսը տանը ընդհանրապես ֆիզիկական վարժություններ չեն կատարում, 32.4 տոկոսը՝ դեպքից դեպք, և միայն 5.2 տոկոսն են մշտապես կատարում:

Մեր այն հարցին, թե հետաքրքրվում են արդյոք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ տեղեկությամբ և հաճախում են մարզադպրոց, հարցվողների 21.2 տոկոսը դրական պատասխան են տվել:

Աղյուսակ 1.

Հարցաթերթիկային հարցման վերլուծության ընդհանուր պատկերը

N	Հարցի բովանդակությունը	Քանակ	Տոկոս
1.	Ձեր առաջադիմությունը		
	ա) բավարար	121	29.5
	բ) լավ	164	40.0
	գ) գերազանց	125	30.5
2.	Հաճույքով եք մասնակցում ֆիզիկական կուլտուրայի դասերին		
	ա) այո	175	42.5
	բ) մասամբ	154	37.6
	գ) ոչ	81	19.7
3.	Տանը կատարում եք ֆիզիկական վարժություններ		
	ա) մշտապես	42	5.2
	բ) դեպքից դեպք	256	32.4
	գ) չեմ կատարում	112	62.4
4.	Հաճախում եք մարզադպրոց		
	ա) այո	87	21.2
	բ) ոչ	288	70.2
5.	Եթե այո, ապա որ մարզաձևից		
	ա) ֆուտբոլ	22	25.3
	բ) սպորտային պարեր	6	6.9
	գ) կարատե	8	9.2
	դ) վոլեյբոլ	2	2.3
	ե) բասկետբոլ	9	10.3
	զ) ըմբշամարտ	4	4.6
	է) ձյուդո	2	2.3
	ը) մարմնամարզություն	4	4.6
	թ) ծանրամարտ	2	2.3
	ժ) լող	2	2.3
	ի) բռնցքամարտ	11	1.26
	լ) թենիս	1	1.15
	խ) սեղանի թենիս	6	6.9
ծ) աթլետիկա	7	8.0	

N	<i>Հարցի բովանդակությունը</i>	<i>Քանակ</i>	<i>Տոկոս</i>
6.	Եթե ոչ, ապա ինչու		
	ա) բավարարվում եմ ֆիզիկական կուլտուրայի դասերով	105	36.5
	բ) սպորտով չեմ հետաքրքրվում	72	25.0
	գ) սիրում եմ զբաղվել սպորտով, սակայն ծնողներս արգելում են	68	23.6
	դ) սիրում եմ, բայց ժամանակս չի բավարարում	43	14.9
	Ձեր տարբերակը	-	-
7.	Ինչ սպորտային խմբակներ կցանկանայիք հաճախել		
	ա) լող	84	29.2
	բ) վոլեյբոլ	33	39.2
	գ) ֆուտբոլ	42	14.6
	դ) սեղանի թենիս	39	13.5
	ե) ձյուդո	15	5.2
	զ) աթլետիկա	14	4.9
	է) բռնցքամարտ	18	6.3
	ը) ձեռնամարտ	26	9.0
	թ) բասկետբոլ	19	6.6
	ժ) կարատե	18	6.3
	ի) ըմբշամարտ	12	4.2
	լ) մարմնամարզություն	22	7.6
	խ) ծանրամարտ	25	8.6
8.	Ձեր կողմից ընտրած մարզաձևի համար ինչն է հանդիսացել դրդապատճառ		
	ա) ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի խորհուրդը	14	16.1
	բ) ծնողների խորհուրդը	12	13.8
	գ) սերը մարզաձևի հանդեպ	31	35.6
	դ) հանրահայտ մարզիկների էլոյթները	14	16.1
	ե) առողջության ամրապնդումը	7	8.0
	զ) սպորտային բարձր արդյունքների հասնելու ցանկությունը	8	9.1
	Ձեր տարբերակը	1	1.5
9.	Առավել հաճույքով մասնակցում եք ֆիզիկական կուլտուրայի դասերին, թե մարզական պարապմունքներին		

N	<i>Հարցի բովանդակությունը</i>	<i>Քանակ</i>	<i>Տոկոս</i>
	ա) ֆիզիկական կուլտուրայի դասեր	42	48.3
	բ) մարզական պարապմունքներ	45	51.7
	Ամեն դեպքում պարզաբանեք		
	ա) պարապմունքները ավելի հաճելի են, քան դասերը	19	21.8
	բ) պարապմունքները ավելի հետաքրքիր են	3	3.4
	գ) սպորտը պետք է բոլորին	15	17.2
	դ) առողջության համար սպորտը պետք է	12	13.7
	ե) դրական լիցքեր են ստանում պարապմունքից	11	12.6
	զ) սերը պարապմունքի հանդեպ	12	13.7
	է) կենսակերպը թույլ չի տալիս մարզվել	11	12.6
	ը) դասերը ավելի հետաքրքիր են	11	12.6
	թ) մարզական պարապմունքներին չեն մասնակցել	40	46
	ժ) դասերին ավելի հաճույքով են մասնակցում	10	11.4
	ի) դասը մնում է դաս	10	11.4
10.	Ձեր ուսումնական հաստատություններում ներկայումս գործում է մարզական խմբակ		
	ա) այո	42	10.2
	բ) ոչ	368	89.8
11.	Այս ընթացքում Ձեր ուսումնական հաստատությունում կազմակերպվե՞լ են որևէ մարզաձևից մրցումներ		
	ա) այո	120	29.2
	բ) ոչ	290	70.8
12.	Եթե այո, ապա որ մարզաձևերից		
	ա) թենիս	9	7.5
	բ) ֆուտբոլ	60	50.0
	գ) վոլեյբոլ	35	29.1
	դ) բասկետբոլ	41	34.1
13.	Այս ընթացքում Ձեր ուսումնական հաստատությունը մասնակցել է որևէ այլ ուսումնական հաստատության հետ որևէ մարզաձևից մրցումների		
	ա) այո	70	17.0
	բ) ոչ	340	82.9
14.	Եթե այո, ապա որ մարզաձևից		
	ա) ֆուտբոլ	26	37.1
	բ) վոլեյբոլ	20	28.5


N	Հարցի բովանդակությունը	Քանակ	Տոկոս
	զ) բասկետբոլ	16	22.8
	դ) թենիս	8	11.4
15.	Կցանկանայի՞ ք, որ ֆիզիկական կուլտուրայից տեսական գիտելիքներ ձեռք բերելու համար առանձին դասաժամ հատկացվեր		
	ա) այո	65	15.8
	բ) չեմ կարող ասել	296	72.1
	գ) ոչ	49	11.9
16.	Ուսումնառության ընթացքում բարելավվել է Ձեր վերաբերմունքը և հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ		
	ա) այո	220	53.6
	բ) դժվարանում եմ ասել	115	28.1
	գ) ոչ	75	18.3
17.	Եթե այո, ապա այն ինչով է արտահայտվում		
	ա) ձեռք եմ բերել մարզական գույք	35	15.9
	բ) կատարում եմ առավոտյան մարմնամարզություն	60	27.2
	գ) ֆիզիկական դաստիարակության դասաժամերից այլևս չեմ բացակայում	47	21.3
	դ) ավելի շատ եմ հետևում արտաքինիս ու կեցածքիս	165	75.0
	ե) ավելի հաճախ եմ դիտում մարզական հաղորդումներ	33	15.0
	զ) որպես հանդիսատես հաճախում եմ տարբեր մրցումների	40	18.1
18.	Որպես մարզիկ այս ընթացքում մասնակցե՞լ եք մրցումների		
	ա) այո	37	9.0
	բ) չեմ մասնակցել	373	90.9
19.	Եթե այո, ապա որ մարզաձևից		
	ա) ֆուտբոլ	14	37.8
	բ) բասկետբոլ	3	8.1
	գ) վոլեյբոլ	4	10.8
	դ) կարատե	4	10.8
	ե) աթլետիկա	2	5.4
	զ) մարմնամարզություն	1	2.7
	է) բռնցքամարտ	1	2.7
	ը) ըմբշամարտ	2	5.4

N	Հարցի բովանդակությունը	Քանակ	Տոկոս
	թ) ձյուղո	2	5.4
	ժ) թենիս	4	10.8
20.	Կցանկանայի՞ ք, որ ֆիզիկական դաստիարակության դասերը անցկացվեին ուսումնառության բոլոր տարիներին		
	ա) այո	162	39.5
	բ) չեմ կողմնորոշվում	191	46.5
	գ) ոչ	57	13.9
21.	Ըստ Ձեզ ֆիզիկական դաստիարակության գործընթացը առավել լավ էր իրականացվում հանրակրթական դպրոցում, թե Ձեր ներկա ուսումնառության վայրում.		
	ա) հանրակրթական դպրոցում	305	74.3
	բ) ներկա ուսումնառության վայրում	76	18.5
	գ) երկուսում էլ	29	7.1
22.	Ամեն դեպքում պարզաբանեք		
	ա) ներկա ուս. վայրում ավելի հաճելի է	47	11.4
	բ) ներկա ուս. վայրում ավելի լավ է	15	3.6
	գ) ներկա ուս. վայրում դասերը ավելի լավ են իրականացվում	17	4.1
	դ) ներկա ուս. վայրում ավելի հետաքրքիր է	13	3.1
	ե) ներկա ուս. վայրում ավելի շատ ենք մարզվում	3	0.7
	զ) ներկա ուս. վայրում ավելի լավ պայմաններ կան	24	5.8
	է) դպրոցում դասերի չէի գնում	3	0.7
	ը) այստեղ տարբեր խաղեր ենք խաղում	18	4.3
	թ) այստեղի միջավայրը ավելի լավն է	20	4.8
	ժ) դպրոցում ավելի լավ էր	284	69.2
	ի) դպրոցում հետաքրքիր էր	263	64.1
	լ) երկուսում էլ լավ էր	29	7.1

Որպես բացասական երևույթ անհրաժեշտ է ամրագրել. 70.2 %-ը ընդհանրապես չի հաճախում մարզադպոց: Իսկ թե ինչո՞ւ չեն հաճախում մարզադպրոց, հարցվողների 36.5 %-ը պատասխանեց, որ բավարարվում են ֆիզիկական կուլտուրայի դասերով, 25.0 %-ը սպորտով չի հետաքրքրվում, 23.6 %-ը սիրում են զբաղվել սպորտով, սակայն ծնողները արգելում են, և 14.9 %-ը սիրում են, բայց ժամանակը չի բավարարում:

Հետաքրքիրն այն է, որ նրանց 29.2 տոկոսը կցանկանար հաճախել լուրի մարզումներին, 39.3 տոկոսը՝ վոլոյբոլի, 14.6 %-ը՝ ֆուտբոլի, 13.5 %-ը՝ սեղանի թենիսի, 5.2 %-ը՝ ձյուդոյի, 4.9 %-ը՝ աթլետիկայի, 6.3 %-ը՝ բռնցքամարտի, 9.0 %-ը՝ ձեռնամարտի, 6.6 %-ը՝ բասկետբոլի, 6.3 %-ը՝ կարատեի, 4.2 %-ը՝ ըմբշամարտի, 7.6 %-ը՝ մարմնամարզության, 8.6 %-ը՝ ծանրամարտի:

Հաջորդ առանցքային հարցին, թե ընտրած մարզաձևի համար ինչն է հանդիսացել դրդապատճառ (տրամագիր 1), 16.1 %-ը պատասխանել է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի խորհուրդը, 13.8 %-ը՝ ծնողների խորհուրդը, 35.6 %-ը՝ սերը մարզաձևի հանդեպ, 16.1 %-ը՝ անվանի մարզիկների էլոյթները, 8.0 %-ը՝ առողջության ամրապնդումը, 9.1 տոկոսը՝ բարձր արդյունքների հասնելու ցանկությունը:



Տրամագիր 1. Մարզաձևի ընտրության դրդապատճառները՝ տոկոսներով

Մեզ համար խիստ առանցքային էր այն հանգամանքը, թե ուսանողները առավել հաճույքով մասնակցում են ֆիզիկական կուլտուրայի դասերին, թե՞ մարզական պարապմունքներին: Արդյունքում պարզվեց, որ հարցմանը մասնակցած ուսանողների 48.3 %-ը հաճույքով մասնակցում է ֆիզիկական կուլտուրայի դասերին, իսկ 51.7 %-ը՝ մարզական պարապմունքներին:

Մարզական պարապմունքներ նախընտրած սովորողների զգալի

մասը պատճառաբանում էր, որ դրանք ավելի հաճելի են, հետաքրքիր և ավելի լավ են կազմակերպվում, քան ֆիզիկական կուլտուրայի դասերը, կամ մարզիչը ավելի մատչելի է բացատրում և անցկացնում մարզումները, քան ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը: Այս հարցի պատասխանները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին՝ դրական երևույթ է, որ բավականին բարձր է առանձին մարզականների դրվածքը, ինչպես նաև սովորողների հետաքրքրության մակարդակը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ, երկրորդը՝ ցավալի է, որ «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքը, ուսուցիչների մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության մակարդակը որոշ միջին մասնագիտական ուսումնարաններում համեմատաբար ցածր է, քան որոշ մարզադպրոցների մարզիչներինը:

Մեզ հետաքրքրում էր նաև, որ միջին մասնագիտական ուսումնարաններում արդյո՞ք գործում է մարզական ակումբ, թե՞ ոչ: Եվ հետաքրքիրը այն էր, որ նրանց ընդամենը 10.2 %-ն էր նշել այո, չնայած որ մեր դիտումների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների անմիջական հարցումները վկայում են, որ ոչ մի ուսումնարանում չի գործում մարզական ակումբ: Այս փաստը վկայում էր, որ ուսանողներից ոչ ոք պատկերացում չունի մարզական ակումբի վերաբերյալ:

Հաջորդ հարցի վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս ամրագրել, որ հարցվողների մոտ 1/3 մասը տեղյակ չէ իրենց ուսումնական հաստատության ներսում մարզական անցուղարձից: Այսպես, նրանց 29.2 %-ն է նշել, որ իրենց ուսումնական հաստատություններում կազմակերպվել են մրցումներ:

Ուսանողների անտեղյակության կամ անտարբերության մասին է խոսում նաև այն, որ նրանց միայն 17 %-ն է տեղյակ, որ իրենց ուսումնական հաստատությունը մասնակցել է մրցումների այլ ուսումնական հաստատությունների հետ: Ի հավելումն այս հարցի՝ պետք է նշել, որ նրանք հիմնականում մասնակցել են ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի մրցումների:

Կարևորելով ֆիզկուլտուրային կրթության դերը՝ որպես սովորողների գիտակցականության, աշխարհայացքի ձևավորման ու ամրապնդման կարևորագույն գործոն՝ մեզ հետաքրքրում էր. արդյո՞ք սովորողները կցանկանան ֆիզիկական կուլտուրայից տեսական գիտելիքներ ձեռք բերել առանձին դասաժամերին: Եվ պարզվեց, որ միայն 15.8 %-ն էր համաձայն առանձին դասաժամեր հատկացնելուն, 72.1 %-ը չէր կարողա-

նում կողմնորոշվել նշված հարցի շուրջ և, ցավոք, 11.9 %-ը հստակ նշեց ոչ:

Հաջորդ հարցը վերաբերում էր նրան, թե արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարելավվել է հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ: Նրանցից 53.6%-ը տվեցին դրական պատասխան, 28.9 %-ը դժվարանում էր պատասխանել, իսկ 18.3 %-ը հստակ պատասխանեց՝ ոչ: Իսկ թե ինչպես էր արտահայտվում, սովորողները պատասխանել են. 15.9 %-ը ձեռք է բերել մարզական գույք, 27.2 %-ը կատարում է առավոտյան մարմնամարզություն, 21.3 %-ը՝ ֆիզիկական կուլտուրայի դասերից չի բացակայում, 75.0 %-ը ավելի շատ է հետևում արտաքինին և կեցվածքին, 15.0 %-ը ավելի հաճախ են դիտում մարզական հաղորդումներ, 18.1 %-ը որպես հանդիսատես հաճախում է տարբեր մրցումների:

Մեզ հետաքրքրում էր այն փաստը, թե արդյո՞ք միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կցանկանային «ֆիզիկական կուլտուրա» առարկան անցկացնել ուսումնառության բոլոր տարիներին: Պարզվեց, որ հարցվողների միայն 39.5 %-ը էր ցանկանում, իսկ 46.5 %-ը չէր կարողանում կողմնորոշվել, և 13.9 %-ը ցավոք նշեց, որ բացարձակապես չի ցանկանում:

Եվ վերջին հարցը, որն ուղղված էր մեր սովորողներին, վերաբերում էր նրան, որ ֆիզիկական դաստիարակության գործընթացը ավելի լավ էր իրականացվում հանրակրթական դպրոցում, թե՞ ներկա ուսումնառության վայրում: Եվ նրանցից 74.3 %-ը նշեց հանրակրթական դպրոցում, 18.5 %-ը՝ ներկա ուսումնառության վայրում, և 7.1 %-ը միայն նշեց թե այնտեղ, թե ներկա վայրում:

Այսպիսով, կազմակերպված սոցիալ-մանկավարժական հետազոտությունները փաստում են, որ ֆիզիկական դաստիարակության դրվածքը ՄՄՈՒՀ-ում բարվոք չէ և պահանջում է համապատասխան լուծումներ: Ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության մասնագիտական ուղղվածությունը պետք է ներառված լինի կրթական ծրագրերում: Դրա հիմնական խնդիրը ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեկան որակների ձևավորումն է, որոնք նպաստում են հաջողակ աշխատանքային գործունեության համար բավարար պատրաստության հասնելուն և այն պահպանելուն: Ժամանակակից պայմաններում ուսանողների ֆիզիկական կրթության տեխնոլոգիականացման հնարավորությունները լիովին կախված են ֆիզիկական կրթություն իրականացնող կազմի մասնագիտական

որակավորումից և նշանակալիորեն որոշվում են ուսումնամեթոդական, ծրագրային ապահովման առկայությամբ և բավարար նյութատեխնիկական բազայով:

Գրականություն

1. Թումանյան Հ. Գ., Մասնագիտական կիրառական ֆիզիկական պատրաստության հարցերը. Материалы научно-практической конференции. Ереван, РАУ, 2003, с. 35-38.
2. Ղազարյան Ֆ. Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ, Երևան, 2007, 214:
3. Ղազարյան Ֆ. Գ., Ստեփանյան Ա. Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, Երևան, Պարբերական, 2003, 168 էջ:
4. Ղազարյան Ֆ. Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսության ներածություն (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, 2021, 109 էջ:
5. Նազարյան Վ. Ռ., Բժշկական քոլեջների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական պատրաստության մեթոդիկա (մեթոդական ձեռնարկ), «Արմինֆո» հրատ., Վանաձոր, 2009, 65 էջ:
6. Նազարյան Վ. Ռ., Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը և մասնագիտությունը (մեթոդական ձեռնարկ), «Արմինֆո» հրատ., Վանաձոր, 2016, 56 էջ:

Роль и значение физической культуры в процессе обучения студентов СПУЗ

Алавердян Эллада

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

к. пед. н., доцент В. Назарян

Резюме

Ключевые слова: *физическая культура, спорт, студент, физические упражнения, спортивные секции*

В статье, путем социологического опроса, определена постановка предмета «физическая культура» в средних специальных учебных заведениях, отношение и уровень интереса студентов к физической культуре и спорту, а также пути совершенствования работы в этом направлении.

The Role and Importance of Physical Culture in the Learning Process of Students of Secondary Vocational Educational Institutions

Alaverdyan Ellada

Faculty of Social Sciences,

“Physical Education and Sports Training”,

Academic Supervisor: V. Nazaryan

Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *physical culture, sports, student, physical exercises, sports groups*

In the article, through a sociological survey, the context of the subject «Physical Culture» in secondary vocational institutions, students' attitude and levels of interest towards sports and physical culture, strategies to improve work in that direction were determined.

Հատուկ բժշկական խմբերի դրվածքի ուսումնասիրությունը հանրակրթական դպրոցներում

Ապրելյան Աննա

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար
մ. գ. թ., դոցենտ Ա. Բարսեղյան*

Հանգուցային բառեր. առողջական շեղում, կրթություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, շարժողական ակտիվություն

Ֆիզիկական կուլտուրան ձևավորում է մարդու ողջ կենսաբանական և հոգևոր ներուժն օգտագործելու ընդհանուր տեսանկյունը, որը ուղղված է օրգանիզմի ընդհանուր ֆիզիկական զարգացմանն ու առողջացմանը, շարժողական հնարավորությունների կատարելագործմանը, մարմնակառուցվածքի բարելավմանը:

Ժամանակակից միջոցների տարածման պայմաններում պակասել է երեխաների շարժողական ակտիվությունը, սահմանափակվել է մկանային գործունեությունը, հետևաբար անհրաժեշտ է ֆիզիկական կուլտուրայի դասերից բացի դպրոցներում ֆիզկուլտ-առողջական և արտադասարանական մարզական ախատանքների կազմակերպումը: Ֆիզիկական դաստիարակության ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, ուղեցույցների ստեղծման ժամանակ անհրաժեշտություն է դարձել հետևյալ սկզբունքներով առաջնորդվելը. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրով առաջարկվող նյութերը պետք է համապատասխանեն սովորողների տարիքային և սեռային առանձնահատկություններին, հոգեբանությանը, լինեն հետաքրքիր և իրատեսական:

Բժշկական հսկողությունը մարմնամարզությունում և սպորտում, ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվող անձանց առողջության վիճակը հսկող համակարգ է: Այն իրականացվում է բուհերում, կամավոր մարզական ընկերություններում, մանկապատանեկան մարզադպրոցներում, ինչպես նաև շրջանային պոլիկլինիկաներում, գյուղական ամբուլատորիաներում, ձեռնարկությունների և հիմնարկների բժշկասանիտարական մասերում ու առողջապահական կետերում գործող առանձնասենյակներում:

Բժշկական հետազոտությունների ծավալն ու բովանդակությունը

որոշվում են ըստ ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվողների քանակակազմի (հաշվի առնելով նրանց մարզական որակավորումը, տարիքը, սեռը), ինչպես նաև պարապմունքների բնույթի (առողջարարական ուղղվածությունը կամ մարզական կատարելությունը): Ֆիզկուլտուրայի և սպորտի պարապմունքներին մասնակցելու և առողջական վիճակի ու ֆիզիկական զարգացման վրա դրանց ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով բժշկական հսկողությունն իրականացվում է դպրոցներում և ուսումնական հաստատություններում ֆիզիկական զարգացման պարտադիր ծրագրով զբաղվողների համար:

Բժշկական հսկողության հիմքը կանոնավոր բժշկական հետազոտություններն են: Գնահատում են ֆիզիկական զարգացումը, ստուգում նյարդային համակարգի, արյան շրջանառության օրգանների, շնչառության և այլնի վիճակը: Կրկնակի բժշկական հետազոտության են ենթարկվում տարին 1 անգամ: Դա հնարավորություն է տալիս հաստատելու պարապմունքների և մարզումների ազդեցությունն օրգանիզմի վրա և օբյեկտիվ ցուցանիշներով եզրակացություն անելու՝ որքանով են դրանք ճիշտ կատարվել: Բժշկական հետազոտությունների տվյալներով հետագա պարապմունքներում և մարզումներում կատարում են անհրաժեշտ փոփոխություններ, վերափոխում պարապմունքների ռեժիմը, մեծացնում կամ փոքրացնում բեռնվածությունը, տեղափոխում մեկ այլ բժշկական խումբ [4]:

Առողջական վիճակի շեղումներ ունեցող (ֆիզկուլտուրայով զբաղվող) անձինք բժշկական հետազոտության են ենթարկվում ավելի հաճախ (տարին 3-4 անգամ): Ընդմիջումներին անհրաժեշտ է կանոնավոր հետևել առողջական վիճակին, այդ գործին զգալիորեն կարող է նպաստել ինքնահսկումը: Մանկապատանեկան մարզական 8 դպրոցներում սովորողների, ինչպես նաև կարգային մարզիկների (գյուղի, քաղաքի, հանրապետության հավաքական խմբերի անդամ) հետազոտությունները կատարում են բուժական ֆիզկուլտուրայի դիսպանսերներում: Մրցումներից և արշավներից առաջ լրացուցիչ բժշկական գնումները պարտադիր են, հատկապես, եթե դրանք կապված են ֆիզիկական որոշակի բեռնվածության հետ [2]:

Հանրակրթական դպրոցի բոլոր աշակերտները ուսումնական տարվա սկզբին պետք է ենթարկվեն բժշկական ստուգման և դրա արդյունքով բաժանվեն հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերի:

Բժշկական **հիմնական** խմբում ընդգրկվում են այն սովորողները, ովքեր առողջ են, ունեն շարժողական հնարավորությունների և ֆիզիկա-

կան պատրաստվածություն բավարար մակարդակ:

Բժշկական **նախապատրաստական** խմբում ընդգրկվում են առողջական վիճակում որոշ շեղումներով, ֆիզիկական զարգացման ու շարժողական հնարավորությունների միջինից ցածր ցուցանիշներով սովորողները:

Բժշկական **հատուկ** խմբում ընդգրկվում են այն սովորողները, որոնց առողջական վիճակում կան մշտական կամ ժամանակավոր բնույթի նշանակալից շեղումներ, հիմնականում՝ սրտանոթային և շնչառական համակարգերի, և որոնց հակացուցված են ֆիզիկական կուլտուրայի պետական ծրագրով նախատեսված վարժությունները:

Հիմնական և նախապատրաստական խմբերում ընդգրկված աշակերտների համար պարտադիր է մասնակցությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին, և ցանկալի է ընդգրկումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արտադասարանական միջոցառումներին ու պարապմունքներին:

Հատուկ խմբում ընդգրկված աշակերտների հետ պարապմունքները անց են կացնում հատուկ պատրաստականություն ունեցող բուժաշխատողները, ինչպես նաև՝ կինեզիոլոգները, ուսուցիչները՝ առանձին ծրագրով:

Աշակերտներին բժշկական մի խմբից մյուսը փոխադրումը կատարվում է բժշկի հերթական կամ լրացուցիչ հետազոտության արդյունքից հետո: Ֆիզիկական կուլտուրայի դասերից ժամանակավոր ազատումը կատարվում է միայն բժշկի թույլտվությամբ [5]:

Ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների բժշկական վերահսկողությունը ընդգրկում է.

- սովորողների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի պարբերական ստուգում,
- բժշկամանկավարժական դիտումներ, մարզական կառույցների սանիտարահիգիենիկ հսկողություն, վնասվածքների կանխարգելում:

Սովորողների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի պարբերական ստուգումները կատարվում են դպրոցի բժշկի կամ բուժօրոշ կողմից: Որպես ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշներ՝ ընտրվում են սովորողի հասակը, քաշը և կրծքավանդակի շրջագիծը:

Բժշկամանկավարժական դիտումներն իրագործում է դպրոցական բժիշկը, վերահսկվում է դասերի ֆիզիկական. բեռնվածությունը, գնահատվում է դրա ազդեցությունը սովորողների օրգանիզմի վրա, ինչպես նաև ֆիզիկական բեռնվածության համապատասխանությունը նրանց

սեռային և տարիքային առանձնահատկություններին, ֆիզիկական զարգացման ու շարժողական հնարավորություններին:

Դիտումների ժամանակ հաշվի են առնվում նաև սովորողների ընդհանուր ինքնազգացողությունը, հոգնածությունը:


Դիտումները կարող են լինել ընդհանուր բնույթի կամ որևէ հարցի վերաբերյալ: Օրինակ՝ անհրաժեշտ է որոշել սովորողների օրգանիզմի հարմարվողականությունը արագաշարժությանը և ուժային վարժություններին: Այդ նպատակով, դասի սկզբին, չափում են 4-5 աշակերտի զարկերակի և շնչառության հաճախությունը, արյան ճնշումը: Այնուհետև՝ դասի ներգրավիչ, հիմնական, եզրափակիչ մասերում և ավարտից 10-15 րոպե հետո, չափում են նույն աշակերտների զարկերակի և շնչառության 11 հաճախությունը: Այդ տվյալների հիման վրա կազմվում է դասի ֆիզիոլոգիական գծանկարային կորը, հաշվում են նաև բեռնվածության խտության տոկոսը, որոշվում է, թե որքանով է օրգանիզմի ռեակցիան համարժեք կատարվող աշխատանքին: Դիտումների արդյունքները վերլուծվում և քննարկվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ, և կատարվում են համապատասխան եզրահանգումներ [3]:

Հատուկ բժշկական խմբերի դրվածքի ուսումնասիրությունը հանրակրթական դպրոցներում պարզելու նպատակով կատարել ենք հետազոտություն Լոռու մարզի Ալավերդու տարածաշրջանի դպրոցներում հարցաթերթիկի միջոցով (հարցվողները՝ ուսուցիչներ): Հարցմանը մասնակցել է 50 ուսուցիչ:

Հարցաթերթիկում ներառված հարցերից առանձնացնենք մի քանիսը.

1. Առողջական շեղում ունեցող աշակերտները ֆիզիկուլտուրայի դասերից ազատվում են, թե ոչ: Հարցին 9 %-ը պատասխանել է այո, իսկ 91 %-ը՝ ոչ:

2. Արդյոք հանրակրթական դպրոցներում գոյություն ունեն հատուկ բժշկական խմբեր: Հարցին 30 %-ը պատասխանել է այո, իսկ 70 %-ը՝ ոչ:




Տրամագիր 1

3. Ինչ գործոններ կարող են խոչընդոտել առողջական շեղում ունեցող երեխանների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին:

Հարցին 36 %-ը պատասխանել է մասնագետների բացակայությունը, իսկ 64 %-ը՝ կարիքին համապատասխան պայմանների բացակայությունը:

4. Առողջական շեղում ունեցող աշակերտների համար մեթոդիկ-վորման նիստում զեկույցներ, քննարկումներ լինում են, թե ոչ: Հարցին 30 %-ը պատասխանել է այո, իսկ 70 %-ը՝ ոչ:

5. Ինչպիսի առաջադրանքներ են տրվում ֆիզկուլտուրայի դասաժամերին:



Տրամագիր 2

Հարցին 70 %-ը պատասխանել է նույն առաջադրանքները, ինչը մյուս աշակերտներին, 20 %-ը՝ ըստ անհատական ուսուցման պլանի, 10 %-ը՝ առողջադրանքներ չեն տրվում:

Քննարկվող խնդրի վերաբերյալ համապատասխան գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը և մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առողջական շեղումներ ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակությանը պրակտիկայում ուշադրություն չի դարձվում: Այս խնդրի շատ հարցեր բավականաչափ ուսումնասիրված չեն երեխաների համար ֆիզկուլտուրայի պարապմունքների արդյունավետ կազմակերպման ու անցկացման, առավոտյան պարապմունքների, ազատ ժամանակ ինքնուրույն վարժությունների առումով: Առողջական

շեղումներ ունեցող երեխաների ճնշող մեծամասնությունը հաճախ բաց է թողնում ֆիզկուլտուրայի դասերը, շատ պասիվ են դասասենյակում, չեն հետաքրքրվում ու չեն մասնակցում դպրոցում անցկացվող սպորտային միջոցառումներին: Մա, ընդհանուր առմամբ, հանգեցնում է սովորողների ցածր շարժիչ ակտիվությանը, ֆիզիկական անբավարար զարգացմանը և շարժողական հմտություններին, որոնք նրանց անհրաժեշտ են առօրյա կյանքում: Ուստի պետք է մեծ ուշադրություն դարձնել այս խնդրի խորը ու բազմակողմանի ուսումնասիրությանը, ինչպես նաև առողջական շեղումներ ունեցող երեխաների սպորտի մեջ արդյունավետ ներգրավման համար հատուկ մանկավարժական մոտեցումների մշակմանը:

Գրականություն

1. Байкина Н.Г., Сермеев Б.В. Физическое воспитание в школе глухих и слабослышащих: учебное пособие. М.: Советский спорт, 2001, - 62 с.
2. Малкин В., Рогалева Л. Спорт – это психология. М.: Спорт, 2015, - 176 с.
3. Матвеев С.Д. Лечебная физическая культура в детском возрасте. СПб : Речь, 2012, 464 с.
4. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-12/90d2d44edee5cbcd729731659cefac07.pdf>
5. [https://www.arlis.am/documentview.aspx?docID=29261:](https://www.arlis.am/documentview.aspx?docID=29261)

Исследование создания специальных медицинских групп в общеобразовательных школах

Апресян Анна

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

к. пед. н., доцент А. Барсегян

Резюме

Ключевые слова: *нарушения здоровья, образование, физическая культура и спорт, двигательная активность*

В статье представлены результаты исследования отношения детей с нарушениями здоровья к физической культуре и спорту.

Глубокие и парциальные нарушения здоровья существенно затрудняют ориентировку детей в пространстве, двигательную, познавательную, учебную и другую деятельность, а также занятия физической культурой и спортом. Поэтому изучение отношения детей с отклонениями здоровья к физической культуре и спорту будет основой эффективной организации и проведения воспитательной работы с этими детьми в области физической культуры, здоровья и спорта.

Research on the Organization of Special Medical Groups in Public Schools

Apresyann Anna

Faculty of Social Sciences,

"Physical Education and Sports Training",

Academic Supervisor: A. Barseghyan

Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *health deviation, education, physical culture and sports, motor activity*

The article presents the results of the research on the attitude of children with health deviation towards physical culture and sports.

Deep and partial disorders of health deviations significantly complicate children's orientation in space, motor, cognitive, educational and other activities, also in physical education and sports. Therefore, the study on the attitude of children with health deviation towards physical culture and sports will be the basis for the effective organization and conduct of educational work with these children in the fields of physical culture, health and sports.

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի հանդեպ վերաբերմունքը և վերլուծությունը միջին դասարաններում

Գևորգյան Ռոբերտ

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Ա. Բարսեղյան*

Հանգուցային բառեր. *հարցադրում, ֆիզիկական կուլտուրա, ֆիզիկական ակտիվություն, դասաժամ, աշակերտներ, փորձ, զարգացած երկրներ*

ՀՀ Կրթության և գիտության նախարարության կարևորագույն նպատակներից է ապահովել դպրոցներում աշակերտների առավելագույն ներգրավվածությունը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերին: Այն ունի առանցքային նշանակություն անձի ձևավորման, նրա ֆիզիկական ներդաշնակ զարգացման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում [1]:


Ուսուցչի կարևոր խնդիրներից է դպրոցականների մեջ սեր և հետաքրքրություն առաջացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ, հասնել այն արդյունքին, որ սովորողների համար դրանց մասնակցությունը դառնա հետաքրքիր, իմաստավից և նպատակաուղղված, իսկ հետագայում նաև դառնա պահանջմունք: Մակայն աշխարհում ժամանակակից տեխնոլոգյաների գերարագ զարգացումը, տեղեկատվության լայն տարածումը դարձրել է տվյալ տարիքային խումբը ֆիզիկապես և հոգեբանաբարոյապես առավել խոցելի: Հետևաբար՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի կարևորագույն նպատակներից է, բացի ֆիզիկական ակտիվության ապահովումը, ներգրավումը դասապրոցեսում, նաև աշակերտ-ուսուցիչ մտերմության ստեղծումը, ինչը հետագայում թույլ կտա կանխարգելել միջին դասարանցիների ինքնահաստատման, անձի և միջանձնային հարաբերությունների ձևավորման պրոցեսում տարատեսակ բարոյությունների, կոմպլեկսների առաջացմանը [2]:

Միջին դասարանների դպրոցականների վերաբերմունքի բացահայտման նպատակով մեր կողմից կազմվել է հարցաթերթիկ, որը լրացվել է անանուն, տասնմեկից տասնչորս տարեկան աշակերտների կողմից:

Հարցմանը մասնակցել են Վանաձորի հիմնական դպրոցների 324 աշակերտներ, որից 148 տղա և 176 աղջիկ:

Վերլուծությունը իրականացնելու նպատակով ուսումնասիրենք յուրաքանչյուր հարցի շուրջ տրված պատասխանները գծապատկերների միջոցով:

«Հաճախում եք դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասերի» հարցի պատասխաններն են՝ «Այո, բոլոր դասերին»՝ 68 %, «Ոչ, ազատված եմ» պատասխանել է միան 2 %, իսկ նրանք, ովքեր կուզեն չհաճախել դասաժամին, կազմեցին 30 %, որից աղջիկները՝ 24 %, տղաները՝ 6 % (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հաճախումների ցուցանիշներ

Քաշային տատանումները՝ ըստ սեռի, հետևյալն էին՝ տղաները՝ 40 կգ-ից ցածր – 48 %, 40-50 կգ – 14 %, 50-60 կգ – 23 % և 60 կգ-ից բարձր – 15 % [գծապատկեր 3]:

Աղջիկների մոտ պատկերը հետևյալն էր՝ 40 կգ-ից ցածր – 42 %, 40- 50 կգ – 13 %, 50- 60 կգ – 8 % և 60 կգ-ից բարձր – 37 %.

Հաջորդ հարցը վերաբերում էր հասակին, ըստ սեռի՝ ցուցանիշները հետևյալն էին՝ տղաների հասակը՝ 120 սմ ից ցածր – 35 %, 120-140 սմ – 17 %, 140-160 սմ – 6 %, 160-ից բարձր – 42 % [գծապատկեր 5]:

Աղջիկները՝ 120 սմ ից ցածր – 34 %, 120-140 սմ – 17 %, 140-160 սմ – 11 %, 160-ից բարձր – 38 % [գծապատկեր 6]:

Դատելով քաշային, հասակի դիագրամմաներից և հավելված 2-ում ներկայացված մարմնի զանգվածի միջազգային սանդղակի նորմայից՝


կարելի է գալ եզրակացության, որ միջին հասակը արական սեռի աշակերտների մոտ կազմում է 40-50 կգ, իսկ հասակը՝ կամ 130-140սմ: Իգական սեռի մոտ միջին քաշը 45-55 կգ, հասակը՝ 150 սմ-ից բարձր, կամ 120 սմ ցածր: Հետևաբար՝ աշակերտների բացասական վերաբերմունքի պատճառներից մեկը կարող է լինել սեփական կառուցվածքից ամաչելը, քանի որ, ըստ հավաքագրված միջինացված ցուցանիշների, տվյալ խմբի աշակերտները հիմնականում նորմայից նիհար են կամ ունեն ավելորդ քաշի խնդիր:

Դիտարկելով «Սպորտ» անվամբ դիագրամայից, պարզ է դառնում, որ երիտասարդների 64 % շահագրգռված չէ իր ազատ ժամանակը տրամադրել սպորտին, և այդ ցուցանիշի գերակշիռ մասը աղջիկներն են: Դրա պատճառը հայկական ավանդական մենթալիտետն է, ըստ որի՝ իգական սեռը չի կարող ունենալ մեծ հաջողություններ սպորտում կամ ամոթ է, որ դեռահաս աղջիկը զբաղվի պրոֆեսիոնալ սպորտով:

Հաջորդիվ տրված հարցերը ուղղված էին առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացման տարբերակների ի հայտ բերմանը: Դիտարկենք տրված հարցերի պատասխանները:

«Արդյոք միջոպրոցական, միջքաղաքային, մարզային կամ հանրապետական մրցաշարերի և արժեքավոր մրցանակների առկայության հանգամանքը կարող է դրդել Ձեզ ավելի ջանասիրաբար պարապել ֆիզիկական կուլտուրա առարկան» հարցին «ոչ» պատասխանել է 88 հոգի, որոնցից 76-ը՝ աղջիկներ:


Այսպիսով, առարկայից խուսափողների թիվը հնարավոր կլինի նվազեցնել, 30 %-ը իջավ մինչև 17 % (զծապատկեր 2):



Գծապատկեր 2. Մրցաշարերի ավելացման ազդեցության ցուցանիշներ

«Եթե դպրոցում ընդունվեր պարտադիր համանման սպորտային համազգեստի կրումը և այն տրամադրվեր դպրոցի կողմից անվճար (ներառյալ սպորտային կոշիկները)» հարցին պատասխանները հետևյալն էին՝ «Մեկ է, չէի հաճախի»՝ 37 հոգի, որոնցից 26-ը՝ աղջիկ:


Քանի որ այս հարցի պատասխանի արդյունքում նույնպես պակասեց բացասական պատասխանողների տոկոսային հարաբերակցությունը, հետևաբար հնարավոր է եզրակացնել, որ որոշ աշակերտների դասերին չմասնակցելու ցանկությունը պայմանավորված է համազգեստով [զծապատկեր 3]:



Չծապատկեր 3. Սպորտային համազգեստի ազդեցության ցուցանիշներ

Հավանաբար ընտանեկան ֆինանսական միջոցների սղությունն է այդ խնդրի պատճառը: Եթե նպատակային ներդրումներ կատարվեն այդ ուղղությամբ, դեռահասների զգալի մասն ավելի ակտիվ կլինի ֆիզիկական կուլտուրայի դասերին և մասնավոր սպորտային խմբակներում:

Առարկայի ժամերի սղությամբ պայամանավորված՝ հնարավոր չէ որևէ սպորտաձևի պրոֆեսիոնալ դասավանդումը (զծապատկեր 4):



Չծապատկեր 4. Սպորտային նախասիրությունների ցուցանիշներ

Մակայն աշակերտները մեծ ոգևորությամբ ընդունեցին այն առաջարկը, որ կարող են բացվել համապատասխան խմբակներ: Աշակերտների նախընտրած սպորտաձևերն են՝ աթլետիկա՝ 16 %, մարմնամարզություն՝ 6 %, վոլեյբոլ՝ 36 %, բասկետբոլ՝ 31 %, հանդբոլ՝ 6 %, այլ՝ 2 %:

Առանձնացված խմբերով դասերի անցկացման հարցին պատասխանները հետևյալն էին՝ «Կհաճախեմ նման դասերի» – 49 հոգի, որոնցից 37-ը աղջիկներ են:

«Մեկ է, չեմ հաճախի» – 29 հոգի, որոնցից 24-ն աղջիկներ են, «Մեկ է, կհաճախեմ» – 80 հոգի, «Չեմ ցանկանա մարզվել առանձնացված խմբերով» – 166 հոգի: Հարցերի պատասխաններից նաև կարող ենք եզրակացնել, որ խնդիրը զուտ ֆիզիկական ակտիվությունը չէ, և բացի վերը թվարկված խնդիրներից, կա հոգեբանական կողմ՝ կապված դասի ժամանակ հակառակ սեռի ներկայությամբ, որը պարտադիր պետք է շտկվի տարիքային խմբին բնորոշ խնդիրը էլ ավելի չխորացնելու համար:

Նման վերաբերմունքի վերացման ուղիներից մեկը նաև միջազգային փորձի ուսումնասիրությունն է:

ԱՄՆ-ում սպորտը ազգային գաղափարներից մեկն է, իսկ դպրոցները ազգային հավաքականների պահուստ են: Հետևաբար, ֆիզկուլտուրայի դասերը պարզապես դասեր չեն, այլ մի ամբողջ համակարգ, որում ներգրավված են գրեթե բոլոր ուսանողները: Ֆիզկուլտուրայի դասերի մեծ մասը կապված է մրցումների և թիմային աշխատանքի հետ: Աշակերտը միշտ հնարավորություն ունի ընտրելու իրեն հարմար մարզաձևը: Ի դեպ, ԱՄՆ-ում կան հատուկ սպորտային ակումբներ ավելորդ քաշ ունեցող երեխաների և մեծահասակների համար: Նման ակումբ մուտքը թույլատրվում է միայն այն մարդկանց համար, ում քաշը նորմայից շատ ավելին է: Ֆիզիկական դաստիարակության բարձր գնահատականը հաճախ օգնում է քոլեջ ընդունվելուն: Ուժեղ մարզիկի համար քոլեջները պատրաստ են «պայքարել» [3]:

Ճապոնիայում քաղաքացիների առողջությունը ազգային գաղափարի մի մասն է, ուստի դպրոցներում ֆիզիկական դաստիարակությանը մեծ ուշադրություն է դարձվում: Այստեղ սովորեցնում են ոչ թե սպորտ, այլ հենց ֆիզիկական կուլտուրա:

Ֆիզկուլտուրայի ուսուցչի աշխատավարձը հաճախ հավասար է խոշոր գործարանի տնօրենի աշխատավարձին: Դպրոցում, որպես կանոն, դասավանդվում է 8-10 սպորտաձև, և յուրաքանչյուրն ունի իր ուսուցիչը:

Ճապոնիայում ֆիզկուլտուրայի ուսուցիչը ոչ միայն ֆիզկուլտուրայի ուսուցիչ է, նաև պետք է ունենա բժշկական որակավորում [4]:

Թերևս աշխարհի ոչ մի երկրում նման ուշադիր վերաբերմունք չկա

դպրոցականի առողջության նկատմամբ: Արդեն առաջին դասարանում երեխան գնվում է, և հայտնաբերվում են առողջության հետ կապված խնդիրներ, անատոմիական առանձնահատկություններ և սպորտային ունակություններ:

Եթե աշակերտը առողջական խնդիրներ ունի, ապա նա գտնվում է ուսուցչի վերահսկողության տակ մինչև ուսման ավարտը: Նա կազմում է սննդի ծրագիր, հատուկ վարժություններ [5]:

Հիմնական նպատակն է ունենալ առողջ շրջանավարտ, որը գիտի իր մարմնի առանձնահատկությունները, տիրապետում է շարժման և սննդի մշակույթին:

Վերը նշված փորձը հնարավոր է ինտեգրել ՀՀ կրթական ծրագրերում, սակայն այն կպահանջի և համապատասխան ներդրումներ, և ժամանակ ֆիզիկական կուլտուրան ազգային արժեք ճանաչելու և ընդունելու համար [5]:

Դեռահասների շրջանում առկային նկատմամբ հարցադրման վերլուծության արդյունքում պարզվեց, որ շուրջ 30 %-ը չի ցանկանում հաճախել ֆիզիկական կուլտուրայի դասերին: Նման ցուցանիշը անհագստանալու մեծ առիթ է, քանի որ սպորտի առկայությունը տվյալ տարիքային խմբի երիտասարդների կյանքում շատ մեծ նշանակություն ունի: Մեծ հետաքրքրությունը, նոր «արգելված» բաներ փորձելու ձգտումը, ավելի բարձր տարիքի երիտասարդներին նմանվելու ցանկությունը մշտապես արդիական է նրանց համար, և ամենից շատ ընդօրինակվում են վատագույն սովորույթները: Սպորտի միջոցով հնարավոր կլինի պահպանել նրանց առողջ մարմինը և միտքը, իսկ վերը արված առաջարկությունները կնպաստեն «ֆիզիկական կուլտուրա» առարկայի նպատակի առավել արագ իրագործմանը [3]:

Իսկ առարկայի կարևորությունը պետք է մատնանշվի հենց փոքր տարիքից, ընտանիքի ներսից: Հասարակական մտածելակերպում պետք է հստակ ամրագրվի այն, որ հենց ֆիզիկական ակտիվությունն ու սպորտային զբաղվածությունն է, որ ժամանակակից երիտասարդին հետ է պահելու գերինֆորմատիվ ժամանակաշրջանում վատագույն սովորություններից:

Գրականություն

1. Ղազարյան Ֆ., Գաբրիելյան Հ., Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագիր, ՄԿՈՒԶՄԿ, Երևան, 2009:

2. Գրիգորյան Յու., Մինասյան Հ., Ֆիզիկական կուլտուրա. չափորոշիչներ և ծրագրեր, ավագ դպրոց, 2009:
3. Գաբրիելյան Հ. Հ. և ուրիշներ, Ուսումնական նյութի պլանավորում. ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2011:
4. Янсон Ю. А. Физическая культура в школе. Научно-педагогический аспект. Книга для педагога. Феникс, 2009.
5. https://mel.fm/zhizn/istorii/9582430-physical_edu

Исследование и анализ отношения учеников средней школы к предмету физическая культура

Геворгян Роберт

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

к. пед. н., доцент А. Барсегян

Резюме

Ключевые слова: *урок, физическая культура, физическая активность, опрос, ученики, опыт, развитые страны*

Физическая культура в школе – предмет, который должен поддерживать не только соответствующую спортивную активность во благо физического здоровья, но и во благо установления моральных ценностей. Цель работы – выявить контингент учеников, который отрицательно относится к предмету физическая культура, и понять причины.

Из результатов анкетирования стало ясно, что 30% опрошенных учеников отрицательно относятся к предмету и не посещают уроки физической культуры. Благодаря наводящим вопросам, стало ясно, что в основе отрицательного отношения к предмету лежат определенные факторы:

- низкий уровень семейного благополучия,
- психологический аспект: переходный возраст и присущие ему комплексы,
- на уроках физической культуры хотят заниматься теми видами спорта, которые они предпочитают.

В исследовании приведены примеры организации урока в Америке и Японии. Выделена та часть, которая может быть адаптирована в образовательную программу РА. Работа завершается рядом предложений и нововведений в процессе обучения средней школы, которые смогут снизить процент учеников с отрицательным отношением к предмету.

Research and Analysis of the Attitude of Secondary School Pupils towards the Subject of Physical Education

Gevorgyan Robert

Faculty of Social Sciences,

"Physical Education and Sports Training",

Academic Supervisor: A. Barseghyan

Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *lesson, physical education, physical activity, survey, students, experience, developed countries*

Physical education at school is a subject supporting not only appropriate sports activity for the benefit of physical health, but also for the benefit of establishing moral values. The purpose of the work is to identify the contingent of students, possessing negative attitude towards the subject of Physical Education, and to understand its reasons.

The results of the survey show that 30% of the students have negative attitude towards the subject and do not attend Physical Education lessons. Due to leading questions, it became clear that certain factors underlie the negative attitude towards the subject:

- low level of family well-being,
- psychological aspect: adolescence and its inherent complexes,
- the desire to engage in the sports they prefer during physical education lessons.

The study provides templates of lesson organization in America and Japan. The part that can be adapted into the RA educational program is highlighted. The work concludes with a number of proposals and innovations in the secondary school teaching process, that can reduce the percentage of students with a negative attitude towards the subject.

Պատանի աթլետների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների վերլուծություն

Հարությունյան Մանե

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Վ. Նազարյան*

Հանգուցային բառեր. *աթլետիկա, սպորտ, մարզիկ, ֆիզիկական զարգացում, շարժողական պատրաստվածություն*

Ինչպես գիտենք, աթլետիկական վարժություններով մարզվելը ակտիվացնում է շնչառական և սիրտ-անոթային համակարգերի գործունեությունը, նպաստում կրծքավանդակի ճիշտ զարգացմանը, թոքերի կենսական տարողության ավելացմանը, մկանունքի ներդաշնակ զարգացմանը, բարելավում է շարժունությունը հողերում և կատարելագործում նյարդամկանային կոորդինացիան:

Երեխաների, դեռահասաների ու պատանիների հետ անցկացվող աթլետիկական պարապմունքների բովանդակությունը կախված է տարիքային առանձնահատկություններից: Պետք է նկատի ունենալ, որ մարդու հյուսվածքները, օրգան համակարգերը աճում, ձևավորվում են աստիճանաբար և մարզման բեռնվածության ավելացման տեմպերը անհրաժեշտ է համաձայնեցնել այդ աճի տեմպերին: Հատկապես պետք է մեծ ուշադրություն դարձնել ոսկրային համակարգի ձևավորմանը: Չպետք է մոռանալ, որ ողնասյունը իր զարգացումն ավարտում է 20-23 տարեկանում: 12 տարեկանից սկսած կատարվում է մկանային համակարգի ուժեղ աճ և հասունության վերջում (աղջիկներ՝ 13-14, իսկ տղաներ՝ 14-16 տարեկան) կազմում է աղջիկներինը՝ միջին հաշվով մարմնի քաշի 36 % -ը, տղաներինը՝ 40 % -ը: Աթլետիկայով պարապել խորհուրդ է տրվում 9-10 տարեկանից: Բազմամյա պատրաստության գործընթացում պատանիները և աղջիկները անցնում են մի շարք տարիքային աստիճաններով: Գոյություն ունեն տարիքային խմբերի դասակարգման տարբեր ձևեր (մանկավարժական, ֆիզիոլոգիական, բազմամյա պատրաստության փուլերով, աթլետիկայի մրցման կանոններով և այլն): Բաժանումը տարիքային խմբերի, որը նախատեսվում է աթլետիկայի մրցման կանոններով, գոյություն ունի երկար ժամանակ և իրեն արդարացրել է պրակտիկայում մարզման և մրցման գործընթացներում: Այդ դասակարգմամբ աթլետները

բաժանվում են հետևյալ տարիքային խմբերի. մինչև 13 տարեկան՝ անչափահասներ, 14-15 տարեկան՝ կրտսեր պատանիներ, 16-17 տարեկան՝ ավագ պատանիներ, 18-19 տարեկան՝ երիտասարդներ, 20 տարեկան և մեծ՝ մեծահասակներ:

Պատանիների հետ աշխատանքի կազմակերպման փուլերում մեծ նշանակություն է ստանում շարժողական ընդունակությունների մշակումը: Հանրագումարի բերելով բազմաթիվ հետազոտությունների տվյալներ՝ կարելի է բավականին մեծ ճշտությամբ նշել տարիքային այն շրջանները, որոնցում, աշխատելով առանձին շարժողական ընդունակությունների վրա, հնարավոր է հասնել այդ ընդունակությունների աճի բարձր տեմպերի: Տարիքային այդ շրջաններն են.

- Արագաշարժություն՝ շարժման տեմպի (հաճախություն) համար 9-ից մինչև 12 և 14-16 տարեկան, առանձին շարժման արագություն՝ 9-ից մինչև 13 տարեկան, շարժողական ռեակցիա՝ 9-ից մինչև 12 տարեկան:
- Դիմացկունության մշակման համար. աերոբ հնարավորություն (ընդհանուր դիմացկունություն)՝ 10-ից մինչև 12 տարեկան և 17-18 տարեկան, հատուկ դիմացկունություն (սպրինտերային)՝ 14-ից մինչև 16 տարեկան, անաերոբ հնարավորություն (միջին և երկար վազորդների հատուկ դիմացկունություն)՝ 15-ից մինչև 19 տարեկան:
- Արագաուժային ընդունակություն՝ 9-10 և 14-17 տարեկան:
- Բացարձակ ուժ՝ 14-ից մինչև 17 տարեկան:
- Ճկունություն՝ 7-ից մինչև 10 և 13-14 տարեկան:
- Ճարպկություն՝ 7-ից մինչև 10 և 16-17 տարեկան:

Այսպիսի դինամիկան որոշակի ձևով ընդգծում է բազմամյա մարզման առանձին փուլերի խնդիրները, նախադրյալ հանդիսանում ստեղծելու ֆիզիկական պատրաստության հատուկ հիմք, որն ապահովում է բարձր արդյունքների ձեռքբերում և սպորտային երկարամյա ակտիվ գործունեություն:

Հաշվի առնելով, որ աթլետիկական վարժությունները բազմազան են, բազմաբնույթ և ամենակարևորը տարբեր ներգործություն ունեն օրգանիզմի վրա, անհրաժեշտ է դառնում այդ վարժությունների ուսուցման գործընթացում պահպանել որոշակի հաջորդականություն: Միաժամանակ խորհուրդ է տրվում պատանիների հետ աշխատանքը կազմակերպել բազմամարտային սկզբունքով, համակողմանի ֆիզիկական զարգացում ապահովելու նկատառումով:

Այդ նպատակով Վանաձորի Աթլետիկայի մարզադպրոցում 2022-

23 թթ. անցկացվեց պատանի աթլետների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների հետազոտություն, որին մասնակցեցին 10-18 տարեկան 107 աշակերտներ:

Այս նպատակով ընտրվել են հետևյալ թեստերը.

- վազք 50 մ – արագային ընդունակությունների գնահատման համար,
- հեռացատկ տեղից – արագաուժային ընդունակությունների գնահատման համար,
- վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ) – դիմացկունության գնահատման համար,
- սեղմումներ հենում պառկած դրությունից (աղջիկներ), ձգումներ պտտաձողից (տղաներ) – մկանային ուժի:

Ստորև բերված են սովորողների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության արդյունքները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մարզիկների ֆիզիկական զարգացման հատկանիշները

Աղջիկներ

10-13 տարեկան-19 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
142	145	36,1	39,4	70,2	71,7

14-15 տարեկան -22 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
155,3	157,6	44	48.8	75,3	78.1

16-17 տարեկան-14 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
158	163	55	63.1	82,6	87.8

Տղաներ

10-13 տարեկան-21 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
145,4	147,2	36,7	39,4	68,5/74,1	70,1/76,3

14-15 տարեկան -18 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
151,8	168.5	41,6	57.7	74,4	82.4

16-17 տարեկան-17 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
170,7	172,7	58,2	60,2	82,8	84,5

Աղյուսակ 2**Ֆիզիկական զարգացման չափանիշները****Աղջիկներ-57 մարզիկ**

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
152	154	45,434	47,754	75,4	77,9

Տղաներ-47 մարզիկ

Հասակը		Քաշը		Կրծքավանդակի շրջ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
157	161	46,5	49,7	75,6	76,9

Աղյուսակ 1-ում բերված են 10-18 տարեկան աղջիկների և տղաների ֆիզիկական զարգացման հիմնական հատկանիշների ցուցանիշները՝ մարմնի հասակ, քաշ, կրծքավանդակի շրջագիծ:

Ինչպես երևում է, բոլոր գնմվող հատկանիշները տարիքի հետ աճում են: Այս տարիքային ժամանակահատվածում զարգացման տվյալ տեղաշարժերը էական են, և կան որոշակի տարբերություններ: Այսպես, 8 տարում մարմնի հասակի ցուցանիշները աղջիկների մոտ աճում է 20 սմ-ով, իսկ տղաների մոտ՝ 25.7սմ-ով, մարմնի քաշը աղջիկների մոտ ավելանում է 26.6 կգ-ով, տղաների մոտ՝ 21.5 կգ, իսկ կրծքավանդակի շրջագիծը նշված ժամանակաշրջանում աճում է աղջիկների մոտ 18.1 սմ-ով, տղաների մոտ՝ 14.3 սմ-ով:

Աղյուսակ 1-ից պարզ երևում է, որ աղջիկների և տղաների մոտ մարդաչափական հատկանիշների առավել աճ նկատվում է 14-15, 16-17 տարեկանում: Իսկ մյուս տարիքներում աճի տեմպը դանդաղում է, և տարբերություններն այդքան էլ էական չեն: Իսկ աղյուսակ 2-ից երևում է, մեկ տարվա մարզումներից հետո աղջիկների հասակը ավելանում է 2 սմ,

քաշը՝ 2.3 կգ, կրծքավանդակի շրջագիծը՝ 2.5 սմ, տղաների մոտ հասակը ավելանում է 4 սմ, քաշը՝ 3.2 կգ, կրծքավանդակի շրջագիծը՝ 1.5 սմ:

Դա վկայում է այն մասին, որ աղջիկների և տղաների մորֆոլոգիական հատկանիշները ուսումնասիրության ընթացքում վիճակագրորեն տարբերվում են միայն 16-17 տարեկանում, իսկ մյուս տարիքներում քիչ են տարբերվում:

Հաջողվեց ցույց տալ, որ, ի տարբերություն տարիքային զարգացման մարդաչափական հատկանիշների, աշակերտների մոտ 16-17 տարեկանում շարժողական պատրաստվածության մակարդակը բնութագրող առանձին ցուցանիշներ ավելի նկատելի են տարբերվում: Այս տվյալները ակնառու կերպով հաստատում են աղյուսակ 3-ում բերված արդյունքները:

Մարզիկների շարժողական պատրաստվածության ցուցանիշները

Աղյուսակ 3

Աղջիկներ – 57 մարզիկ

50մ		500մ		Հ) ց տեղից		Սեղմուններ՝ հենում-պառկած դ.	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
7,88	7,63	1.41.7	1.39.7	195,43	199,26	20	26

Տղաներ – 47 մարզիկ

50մ		1000մ		Հ) ց տեղից		Զգումներ պտտաձողի վրա	
2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.	2022 թ.	2023 թ.
7,41	7,09	3.27.7	3.18.1	208,55	222,481	7	10

Այստեղից երևում է, որ սովորողների արագաշարժության ընդունակությունները 50 մ վազքի արդյունքներով 2002-23 թթ. ժամանակահատվածում աղջիկների մոտ բարելավվում է 0.25 վ, իսկ տղաների մոտ՝ 0.32 վ: Այստեղ, ինչպես և վերը նշվածում, արդյունքների առավել աճ նկատվում է 16-17 տարեկանում և ավելի քիչ՝ մյուս կից տարիքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում գրեթե նույնատիպ պատկեր է դիտվել արագաուժային ընդունակությունների ցուցանիշներում՝ տեղից հեռացասկի արդյունքներով: Այստեղ աղջիկների մոտ արդյունքներն աճել են 4.8 սմ, իսկ տղաների մոտ՝ 14.1 սմ: Այստեղ նույնպես արդյունքների աճի ամենամեծ տեմպը գալիս է 16-17 տարեկանում, մյուս կից տա-

րիքներում ցատկունակության ցուցանիշների տեղաշարժերը ակնառու չեն: Ուժային ընդունակությունները մեկ տարվա մեջ աճել են աղջիկների մոտ 4 հատով, տղաների մոտ՝ 3 հատով: Եվ, վերջապես, ընդհանուր դիմացկունության արդյունքների գնահատման վերլուծությունը թույլ է տալիս նշել հետևյալը: Պարզվեց, որ աղջիկների 500 մ վազքատարածության արդյունքները բարելավվել են 2 վայրկյանով, նույնը նկատվում է նաև տղաների 1000 մ վազքում. աճը կազմում է 9.6 վ: Այստեղ ևս հաստատվեցին վերևում բացահայտված օրինաչափությունները այն մասին, որ 16-17 տարեկանների մոտ տեղաշարժերը ավելի բարենպաստ են և քիչ են մնացած կից տարիքներում:

Նյութի մաթեմատիկական մշակումը խոսում է այն մասին, որ ոչ բոլոր դեպքերում են տարիքային ցուցանիշների միջև առանձին թեստերի տարբերությունները արժանաքավատ և էական:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ 10-18 տարեկան աղջիկների և տղաների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների դինամիկայում էական նշանակություն ունի տարիքային գործոնը:

Մինևույն ժամանակ մարմնական զարգացման և շարժողական ցուցանիշները միանման և միատուղված չեն փոփոխվում: Այսպես, թեև գննվող տարիքային հատվածում ֆիզիկական զարգացման ցուցանիշները (մարմնի հասակը, քաշը, կրծքավանդակի շրջագիծը) փոփոխվում են աստիճանաբար, սակայն շարժողական թեստերի արդյունքները (արագաշարժություն, ցատկունակություն, դիմացկունություն) ավելի նկատելի են բարելավվում:

Դրա հետ մեկտեղ բոլոր թեստավորված վարժություններում այս դրական տեղաշարժերը հատկապես ակնհայտ են 16-17 տարեկան աղջիկների և տղաների մոտ, հետո աճի տեմպը փոքր-ինչ դանդաղում է:

Գրականություն

1. Աթլետիկա. ուսումնական ձեռնարկ, Երևան, «Մոսսփոզ», 2003, 187 էջ:
2. Հայրապետյան Մ. Ս., Աթլետիկա. արագավազք և փոխանցումավազք, Երևան, 2008, 146 էջ:
3. Մամաջանյան Վ., Աթլետիկա. ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003:
4. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության տեսություն և մեթոդիկա, Երևան, 2011, 194 էջ:
5. Ղազարյան Ֆ. Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ, Երևան, 2007, 214 էջ:
6. Попов В.Б. 555 специальных упражнений в подготовке легкоатлетов. М., Олимпия Пресс, Тера Спорт, 2002, - 208 с.
7. Тер-Ованесян И.А. Подготовка легкоатлета: современный взгляд. М., Тера-Спорт, 2000, - 128 с.
8. Легкая атлетика. Правила соревнований. Тера-Спорт, Олимпия Пресс, М., 2006, - 144 с.
9. Легкая атлетика. Учебник для институтов физической культуры. Физкультура и спорт, 1989, - 671 с.

**Анализ показателей физического развития и двигательной
подготовленности юных атлетов**

Арутюнян Мане

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

к. пед. н., доцент В. Назарян

Резюме

Ключевые слова: *атлетика, спорт, спортсмен, физическое развитие, двигательная подготовка*

С помощью педагогического тестирования в статье были определены и разработаны показатели физического развития и двигательной подготовленности юных спортсменов, в котором приняли участие 107 школьников в возрасте 10-18 лет, был определён возрастной диапазон, в котором, работая над определёнными двигательными способностями, можно достичь высокого темпа роста этих способностей.

**Analysis of Indicators of Physical Development
and Motor Readiness of Young Athletes**

Harutyunyan Mane

Faculty of Social Sciences,

“Physical Education and Sports Training”,

Academic Supervisor: V. Nazaryan

Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *athletics, sport, sportsman, physical development, motor readiness*

The article presents the physical development and motor readiness indicators of young athletes, determined through pedagogical testing in which 107 students aged 10-18 participated. It establishes the age ranges at which a high rate of growth in certain abilities can be achieved if individuals focus on developing these abilities effectively.

**Վանաձորի բարձրագույն ուսումնական հաստատությունների,
քոլեջների ուսանողների, սպորտդպրոցների մարզիչների և
մարզիկների, այդ թվում ՎՊՀ ուսանողների շրջանում անցկացված
սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը**

Մարտիրոսյան Ռաֆիկ

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար
մ. գ. դ., պրոֆեսոր Վ. Ղարազոյան*

Հանգուցային բառեր. *ֆիզիկական կուլտուրա, սպորտ, ուսանող,
խորհրդային սպորտ, օլիմպիական խաղեր, առողջ ապրելակերպ*

1954 թվականին սահմանվել է 73 հանրապետական և համամիութենական ռեկորդ, նվաճվել են 5 ոսկե, 9 արծաթե և բրոնզե մեդալներ, 68 դիպլոմ, 8 մարզիկ լրացրել է սպորտի վարպետի նորման: Հայաստանում կար 128 սպորտի վարպետ: Այս տարիներին մեծ գործ կատարեցին սպորտային կամավոր ընկերությունները. «Սպարտակ», «Ավանգարդ», «Դինամո», «Զենիթ», «Բուրեվեստնիկ», «Կրասնայա Ջնամյա», «Ուրոժայ», «Վոդնիկ», «Աշխատանք», «Սևան», «Լոկոմոտիվ», «Քիմիկ», «Կոլոս», «Աշխատանքային Ռեզերվներ», «Շինարար», «ԲՄԱ», «ԲԿՄԱ», «Պիշչնիկ», «Նաուկա»: 1952 թ. ԽՍՀՄ-ում պատրաստվել է 1181 սպորտի վարպետ (237 կին):

ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաները եղան սպորտի նվաճումների ստուգատեսներ: Կառուցվեցին հազարավոր մարզադահլիճներ, մարզադաշտեր, վազբուղիներ: Մեծ տեղ տրվեց արտադրական մարմնամարզությանը: Բացվեցին հազարավոր մանկական սպորտդպրոցներ (ДЮСШ), բարձրակարգ մարզիկների կատարելագործման դպրոցներ (ШВСМ), ֆիզկուլտուրային դիսպանսերներ, նկուղային մարմնամարզական ակումբներ (մեր քաղաքում առաջինը՝ Վալերի Ժամհարյան) [1]:

Հայաստանցի մարզիկներն օլիմպիական խաղերին մասնակցում են 1952 թվականից: 1952-1988 թվականներին. Հայաստանը հանդես է եկել ԽՍՀՄ դրոշի ներքո: 1990 թվականի հոկտեմբերի 23-ին Երևան քաղաքում հրավիրվեց Հայաստանի ազգային օլիմպիական շարժման հիմնադիր համագումարը, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված էր այն իրո-

ղությամբ որ Հայաստանը ազգային օլիմպիական կոմիտե չուներ, իսկ օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունքը վերապահվում է միայն այն երկրներին, որոնք ունեն ազգային օլիմպիական կոմիտե և անդամակցում են ՄՕԿ-ին: ՀՀ ազգային օլիմպիական շարժման հիմնադիր համագումարը հրավիրվեց ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի, հասարակական մարզական կազմակերպությունների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, անվանի մարզիչների և մարզիկների նախաձեռնությամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1992 թվականին, նախկին խորհրդային հանրապետությունները հանդես եկան ԱՊՀ դրոշի ներքո:

1996 թվականից սկսած՝ հայաստանցի մարզիկները Օլիմպիական խաղերում հանդես են գալիս Հայաստանի դրոշի ներքո [1]:

Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի զարգացման համար պատմական նշանակություն ունեցավ 2001 թվականին «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Ներկայումս ֆիզկուլտուրային կադրերի պատրաստման գործով զբաղվում է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, Գյումրիի և Վանաձորի պետական համալսարանների ֆիզիկական դաստիարակության ամբիոնները: Ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ են տարվում ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ամբիոններում և գիտահետազոտական կենտրոնում, հանրապետության բուհերի ֆիզդաստիարակության ամբիոններում [2]:

Այսօր Հայաստանում առավել տարածված սպորտաձևերից են ֆուտբոլը, շախմատը, ծանր աթլետիկան, բռնցքամարտը, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտը, ձյուդոն, լողը, բասկետբոլը և այլն:

Սպորտի և ֆիզկուլտուրայի բնագավառում բարեփոխումներ իրականացնելու, էլ ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու, հաջողություններ գրանցելու համար պետք է հաշվի առնել անցյալի փորձը, ԽՍՀՄ ժամանակաշրջանի լավագույն ավանդույթները՝ կապված մարդկանց առողջ սպրեյակերպի և սպորտի բնագավառում նորանոր նվաճումներ ձեռք բերելու հետ: Հենց այս նկատառումով սոցիալաբանական անցկացրի քաղաքի երեք մարզադպրոցների 22 մարզիչների և 57 մարզիկների, ինչպես նաև ՎՊՀ 70 ուսանողների և 14 աշխատակիցների շրջանում:

Աղյուսակ 1.

Հարցաթերթիկային հարցման վերլուծության ընդհանուր պատկերը

N	Հարցի բովանդակությունը	Քանակ	Տոկոս
1.	Համամիտ եք այն մտքի հետ, որ ԽՍՀՄ կազմում հայաստանցի մարզիկները համեմատաբար ավելի շատ սպորտային նվաճումներ են գրանցել, քան անկախ Հայաստանում:		
	ա) այո	17	10.4
	բ) ոչ	72	44.1
	գ) լիովին համաձայն եմ	15	9.2
	դ) բոլորովին համաձայն չեմ	59	36.1
2.	Արդյոք ԽՍՀՄ կազմում Հայաստանի բնակչության համար ապահովված էին ավելի բարենպաստ պայմաններ առողջ ապրելակերպի համար, քան անկախ Հայաստանում:		
	ա) այո	78	47.8
	բ) ոչ	31	19
	գ) չգիտեմ	54	33.1
3.	Արդյոք Խորհրդային Հայաստանում սպորտով զբաղվելու աստիճանը ավելի բարձր հիմքերի վրա էր դրված, քան անկախ Հայաստանում:		
	ա) այո	62	38
	բ) ոչ	48	29.4
	գ) չգիտեմ	53	32.5
4.	Արդյոք ԽՍՀՄ կազմում հայերը ավելի շատ էին սպորտով զբաղվում, քան անկախ Հայաստանում:		
	ա) այո	81	49.6
	բ) ոչ	66	40.4
	գ) չգիտեմ	16	9.8
5.	Համամիտ եք այն մտքի հետ, որ Խորհրդային Հայաստանում հայ մարզիկների պարապմունքները ավելի կանոնակարգված էին, քան անկախ Հայաստանում:		
	ա) համամիտ եմ	47	28.8
	բ) համամիտ չեմ	116	71.1
6.	Համամիտ եք այն մտքի հետ, որ Խորհրդային Հայաստանում հայ մարզիկների պարապմունքները ավելի արյունավետ էին քան անկախ Հայաստանում:		
	ա) համամիտ եմ	87	53.3
	բ) համամիտ չեմ	76	46.6

N	Հարցի բովանդակությունը	Քանակ	Տոկոս
7.	Քանի օլիմպիական չեմպիոն ունենք:		
	ա) 12	34	20.8
	բ) 14	68	41.7
	գ) 18	16	9.8
	դ) չգիտեմ	45	27.6
8.	Արդյոք Խորհրդային Հայաստանում մարդիկ ավելի առողջ, շարժուն, եռանդուն և էներգիայով լի էին, քան անկախ Հայաստանում: Եթե այո, ապա ինչով էր դա պայմանավորված:		
	ա) բացակայում էին համակարգիչն ու բջջային հեռախոսը	58	35.5
	բ) պետական մակարդակով ավելի մեծ ուշադրություն էր դարձվում մարդկանց առողջ ապրելակերպին	38	23.3
	գ) առկա էին բազում աշխատատեղեր	21	12.8
	դ) երկիրը ավելի կայուն էր	18	11
	ե) ոչ	16	9.8
	զ) չգիտեմ	12	7.3
9.	Ընդհանուր առմամբ քանի օլիմպիական ոսկի ունենք ԽՍՀՄ կազմից, ԱՊՀ և անկախ Հայաստանից մեր մարզիկների կողմից:		
	ա) 14	62	38
	բ) 15	28	17.1
	գ) 18	54	33.1
	դ) 19	5	3
	ե) չգիտեմ	14	8.5
10.	Որ մոտեցումներն է պետք փոխ առնել խորհրդային ժամանակաշրջանի մոտեցումներից՝ սպորտին և ֆիզկուլտուրային վերաբերող:		
	ա) Առաջնայինը առողջ ապրելակերպն է	63	38.6
	բ) Սպորտային հաջողությունները մեծապես կախված են երկրի ընդհանուր կայունությունից	42	25.7
	գ) Սպորտը այն ոլորտն է, որը մշտապես պետք է լինի պետության և հասարակության հոգածության առարկա	58	35.5

Այսպիսով, հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ տարբեր տարիքային խմբերի՝ հատկապես 40-60 տարեկան հարցվողների

շրջանում, գերակայում է այն կարծիքը, որ Խորհրդային ժամանակաշրջանում հայկական պրոֆեսիոնալ սպորտը, ինչպես նաև բնակչության ֆիզիկական պատրաստվածության, առողջ ապրելակերպին նպաստող գործոնները բավականին կայուն, բարձր հիմքերի վրա էին դրված: Սա բացատրվում է նրանով, որ Խորհրդային Հայաստանի, ինչպես և մյուս խորհրդային հանրապետությունների յուրաքանչյուր քաղաքացու կյանքում սպորտային մարզումները և առողջ ապրելակերպը առաջնային կարևորագույն դեր ունեին: Խորհրդային Հայաստանի սպորտը, այս բնագավառում ձեռք բերված նվաճումները անխզելիորեն կապված էին Հայաստանի կայուն զարգացման, առողջ ապրելակերպի խրախուսման, մնացած բոլոր բնագավառներում երկրի գրանցած հաջողությունների և նվաճումների հետ: Սպորտային մարզումների մեջ երեխաներին սկսում էին ներգրավել դեռ մանկուց՝ մանկապարտեզներում, այնուհետև դպրոցներում, ուսումնական այլ հաստատություններում, արտադրական ձեռնարկություններում: Տեղ էին գտնում նաև առավոտյան մարմնամարզությունը, տարբեր մրցաշարերը, նորմատիվների հանձնումը: Այս բոլոր ֆիզիկական վարժանքներն ու մարզական ծանրաբեռնվածությունները ներառված էին անձի զարգացման պետական ծրագրերում: Պետությունը իր կարևորագույն խնդիրներից մեկը համարում էր քաղաքացիների առողջության պահպանումը: Բոլոր հնարավոր միջոցներով քարոզչություն էր իրականացվում և խրախուսվում էր սպորտով զբաղվելը, առողջ ապրելակերպին հետևելը: այժմ էլ թանգարաններում, նաև ինտերնետ կայքերում կարելի է հանդիպել մեծ թվով ազիտացիոն պաստառների հետևյալ բովանդակությամբ՝ «Եղի՛ր ուժեղ և ճարպիկ», «Առողջ մարմնում՝ առողջ հոգի», «Երիտասարդությունը՝ դեպի մարզադաշտեր», «Տարիքը սպորտին խոչընդոտ չէ»:

Այսպիսի նպատակապահ, հետևողական քաղաքականության արդյունքում Խորհրդային Հայաստանը ունեցավ զգալի ձեռքբերումներ սպորտի բնագավառում:

Այժմ յուրաքանչյուր տարի մշակվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ծրագիր և միջոցառումների ցանկ: Ծրագրի խնդիրներն են օլիմպիական և պարօլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար մարզիկների և մարզաձևերի ազգային հավաքական թիմերի արդյունավետ նախապատրաստման և մասնակցության ապահովումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման սոցիալական առաջնայնության ապահովման համար իրավական և տնտեսական մեխանիզմների մշակումն ու իրագործումը, ինչպես նաև բնակչու-

թյան ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծումը: Այսպիսով, սպորտի բնագավառի պետական քաղաքականությունը միտված է երկու կարևոր նպատակների՝ առաջինը բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արմատավորման համալիր ծրագրերի իրագործումն է, որը ներառում է բնակչության բոլոր շերտերի ներգրավվածությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման շրջանակը:

Երկրորդ առաջնահերթությունը միտված է միջազգային մրցասպարեզներում հայ մարզիկների մեդալների նվաճմանը, նոր ռեկորդների գրանցմանը, օլիմպիական և պարօլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում, ազգային և այլ մարզաձևերում, ադապտիվ սպորտում նոր հաջողությունների արձանագրմանը [3]:

Գրականություն

1. История физической культуры и спорта (под редакцией В.В. Столбова.), М., 1983.
2. Olivova V. Sports and Games in the Ancient World, London, 1984.
3. Իսպիրյան Մ. Ս., Հայաստանը և հայերը օլիմպիական շարժման ոլորտում, Երևան, 2000:
4. Հայկական համատոտ հանրագիտարան, հատոր 4, Երևան, 2003:
5. Իսպիրյան Մ., Առաքելյան Վ., Մարզական Հանրագիտարան, Երևան, 2003:
6. Энциклопедия олимпийского спорта под редакцией академика А. П. Плетонова, 3 том. Киев, 2004.
7. Ղարազրոյան Վ. Հ., Օլիմպիական խաղեր, անցյալը, ներկան, արձագանքները և հայորդի մարզիկների մասնակցությունը խաղերին, Վանաձոր, 2004:
8. Ծառուկյան Գ. Ն., Օլիմպիական Հայաստան, Երևան, 2010:
9. Ղարազրոյան Վ. Հ., Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համառոտ պատմություն. ուսումնական ձեռնարկ, Վանաձոր, «Արմինֆո», 2011:
10. Համահայկական խաղերի արձանագրություններ:
11. <https://escs.am/am/news/14061>
12. <http://www.armnoc.am/arm/anoc/history-of-sport>

Анализ результатов социологического опроса, проведенного среди студентов высших учебных заведений и колледжей Ванадзора, тренеров и спортсменов спортивных школ и студентов ВГУ

Мартиросян Рафик

Факультет социальных наук

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

д. пед. н., профессор В. Карагезян

Резюме

Ключевые слова: *физическая культура, спорт, студент, советский спорт, олимпийские игры, здоровый образ жизни*

Путем социологического опроса в статье определена точка зрения тренеров, специалистов, учителей старших школ и колледжей, студентов и преподавателей филиалов Ереванского политехнического института и Национального аграрного университета и колледжа, преподавателей физического воспитания средних школ Ванадзора и спортсменов спортивных школ, а также студентов Ванадзорского государственного университета по вопросам развития «физкультуры и спорта» Республики Армении.

The Higher Vocational Education Analysis of the Results of the Sociological Survey conducted among Students of HEIs and Colleges of Vanadzor, Coaches and Athletes of Sports Schools and Students of VSU

Martirosyan Rafik

Faculty of Social Sciences,

“Physical Education and Sports Training”,

Academic Supervisor: V. Gharagyozyan

Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

Key words: *physical culture, sports, student, Soviet sport, Olympic games, healthy lifestyle*

The article defines the standpoint of coaches, specialists, teachers of high schools and colleges, students and teachers of Yerevan Polytechnic Institute and National Agrarian University branches and colleges, Physical Education teachers of Vanadzor High Schools and athletes of Sports Schools, as well as students of Vanadzor State University on the issues of development of “Physical Culture and Sport” in the Republic of Armenia through sociological survey.

Նորակոչիկների ֆիզիկական պատրաստության բարձրացման ուղիները ռազմակիրառական վարժությունների միջոցով

Պետրոսյան Արթուր

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝ Հ. Մարգարյան*

Հանգուցային բառեր. *զինվորական ծառայություն, գորակոչային տարիք, գործընթաց, ֆիզիկական պատրաստություն, թեստ, շարժողական ընդունակություն, ստուգողական, ծրագիր*

Երիտասարդ սերնդի ֆիզիկական ներդաշնակ զարգացման նկատմամբ անընդհատ աճող պահանջները պայմանավորված են ոչ միայն արդյունավետ և լիարժեք աշխատանքի նախապատրաստելու անհրաժեշտությամբ, այլև նախապատրաստվելու զինվորական ծառայության: Վերջին շրջանում նկատվում է գորակոչայինների ֆիզիկական պատրաստվածության անկման գործընթաց: Նրանց զգալի մասը չի կարողանում կատարել նորմատիվ պահանջները, ինչի հետևանքով նկատելի թվով երիտասարդներ պատրաստ չեն ծառայելու զինված ուժերում [3]:

Շարժողական ընդունակությունների մշակման գործընթացը առաջատար դեր ունի օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացման գործընթացում: Վերջին տասնամյակում, ժամանակակից աշխարհի պայմաններում, նկատվում է երեխաների, դեռահասների, նախագորակոչային և գորակոչային երիտասարդության ֆիզիկական տվյալների վատթարացման միտում:

Հայտնի է, որ դպրոցներում սովորողների ֆիզիկական ակտիվության պահանջները ցածր են 2-3 անգամ, իսկ ֆիզկուլտուրայի դասերը փոխհատուցում են օրական շարժողական պահանջները ընդամենը 11%-ով:

Հետևաբար, կարևոր է որոշել, թե որքանով են բավարար ժամանակակից երիտասարդներին զինվորական ծառայության նախապատրաստելու պահանջները [5]:

Այս խնդրի հիմնական լուծման անհրաժեշտությունը նոր աճող սերնդի ֆիզիկական ակտիվության, զարգացման, առողջ ապրելակերպի նկատմամբ դրական վերաբերմունք, ֆիզիկական կուլտուրայով և սպոր-

տով զբաղվելու պահանջմունք և բարոյականային հատկություններ ձևավորելն է: Ջորակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստության նախապատրաստվածությունը համարվում է առաջնային հետագա զինվորական ծառայությանը հարմարվելու գործընթացին:

Այս ամենի իրականացման համար անհրաժեշտ է բավարար ֆիզիկական պատրաստվածության մակարդակ [7]:

Ընդհանուր և հատուկ ֆիզիկական կարողությունների զարգացման նպատակով անհրաժեշտություն է դառնում բարձրացնել օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ հնարավորությունների մակարդակը: Այս խնդրի իրականացման համար, բացի «ֆիզիկական կուլտուրա» առարկայով նախատեսված ծրագրային պահանջներից, կարևորվում են նաև լրացուցիչ ծրագրեր, որոնք ուղղված են հատուկ շարժողական ընդունակությունների մշակման գործընթացին:

Ըստ մեզ՝ ռազմակիրառական ֆիզիկական պատրաստականությանը ներկայացվող լրացուցիչ ծրագրերը կարող են նպաստել և ձևավորել այն անհրաժեշտ պատրաստականության պահանջները, որոնք ներկայացվում են զորակոչային տարիքին [3]:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել նորակոչիկների ֆիզիկական պատրաստականության առանձնահատկությունները ռազմակիրառական վարժությունների միջոցով:

Աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

1. ուսումնասիրել համապատասխան ուսումնամեթոդական գրականություն,
2. բացահայտել նորակոչիկների ֆիզիկական պատրաստականության մակարդակը,
3. կազմել ռազմաֆիզիկական պատրաստության ծրագրեր և գնահատել նրանց արդյունավետությունը:

Ֆիզիկական պատրաստականությունը համարվում է մանկավարժական գործընթաց, որն ուղղված է շարժողական ընդունակությունների մշակմանը, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացմանը, ստեղծում է բարենպաստ պայմաններ մարդու կյանքի նորմալ կենսագործունեության համար:

«Ֆիզիկական պատրաստություն» հասկացությունը օդտագործվում է այն դեպքում, երբ անհրաժեշտություն է դառնում շեշտադրել նրա կիրառական ուղղվածությունը ֆիզիկական դաստիարակության աշխատանքային, ռազմական, մարզական և այլ ուղղվածություններին:

Տարբերակվում են ֆիզիկական պատրաստության երկու կողմեր՝ ընդհանուր ֆիզիկական պատրաստություն (ԸՖՊ) և հատուկ ֆիզիկական պատրաստություններ (ՀՖՊ) [2; 6]:

ԸՖՊ-ն գործընթաց է ուղղված մշակելու և կատարելագործելու շարժողական ընդունակությունները, որի նպատակն է մարդու բազմակողմանի, ներդաշնակ զարգացումը: ԸՖՊ-ն նպաստում է նաև օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների, ընդհանուր աշխատունակության բարձրացմանը, համարվում է հիմք՝ հատուկ պատրաստության և ընտրած գործունեության տեսակում բարձր արդյունավետություն ապահովելու համար:

ԸՖՊ միջոցներն են համարվում բազմաբնույթ ֆիզիկական վարժությունները, բնության բնական ուժերը և հիգիենիկ գործոնները:

ՀՖՊ նպատակն է բարձրացնել օրգան համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները, մշակել և կատարելագործել կոնկրետ գործունեության տեսակին համապատասխան ֆիզիկական հնարավորությունները:

Ռազմակիրառական ֆիզիկական պատրաստությունը համարվում է ֆիզիկական դաստիարակության մասնագիտացված ձև, որն իրականացվում է հատուկ աշխատանքային և զինված ուժերի պահանջներին համապատասխան [1]:

Ռազմակիրառական պատրաստության հիմնական խնդիրներն են.

1. նպատակաուղղված և կոնկրետ գործունեության պահանջներին համապատասխան շարժողական ընդունակությունների մշակում և կատարելագործում,
2. շարժողական կարողությունների և հմտությունների կատարելագործում, որոնք անհրաժեշտ են աշխատանքում և զինված ուժերում ծառայելու ընթացքում,
3. բարձրացնել օրգանիզմի ֆունկցիոնալ կայունությունը անսովոր և արտակարգ իրավիճակներում:

Գիտամեթոդական գրականության վերլուծությունից պարզ է դառնում, որ նորակոչիկների ֆիզիկական պատրաստականության հսկման նպատակով անհրաժեշտ են ստուգողական վարժությունների համալիրներ, որոնք կարող են բնորոշել շարժողական ընդունակությունների բազային մակարդակները:

Անկախ ֆիզիկական վարժությունների բնույթից և ֆիզիկական պատրաստության կայունության մակարդակից՝ առաջարկվում են 3-ից

մինչև 15 փորձարարական թեստեր [3]:

Խնդիրների լուծման նպատակով իրականացվեցին շարժողական ընդունակությունների մշակման ուսումնասիրություններ:

Արագաշարժությունը որոշելու նպատակով անցկացվեց «Վազք 100 մ» բարձր ստարտից (չափման միավորը՝ վ):

Ուժային ընդունակությունները որոշելու նպատակով անցկացվեց «Վերձգումներ պտտաձողին» (չափման միավորը՝ քանակ):

Դիմացկունությունը որոշելու համար՝ «Վազք՝ 3000 մ» (չափման միավորը՝ ր/վ):

Ճարպկությունը որոշելու համար՝ «մաքոքավազք 3*10 մ» (չափման միավորը՝ վ) [6]:

Ուսումնասիրություններն անցան 3 փուլերով:

1-ին փուլ – շարժողական ընդունակությունների վերաբերյալ նախնական տվյալների հավաքում (օգոստոս- սեպտեմբեր),

2-րդ փուլ – ընթացիկ կամ զարգացնող (շարժողական ընդունակությունների մակարդակի ստուգում՝ համաձայն մշակված մեթոդիկայի), (հոկտեմբեր-նոյեմբեր),

3-րդ փուլ – ամփոփիչ կամ ստուգողական (արդյունքների ամփոփում, համեմատում, մշակված մեթոդիկայի ճշգրտում) (դեկտեմբեր):

Ֆիզիկական պատրաստականության թեստերի փուլայնության արդյունքում արձանագրվեցին հետևյալ ցուցանիշները.

Աղյուսակ 1.

Ֆիզիկական պատրաստականության թեստերի փուլայնություն

	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
Վազք՝ 100 մ (վ) Արագաշարժության ընդունակություններ	15,8	15,3	14,6
Վերձգումներ պտտաձողին (քանակ) Ուժային ընդունակություններ	8	11	13
Մաքոքավազք 3*10 մ (վ) Ճարպկային ընդունակություններ	7,6	7,3	6,9
Վազք՝ 3000 մ (ր/վ) Դիմացկունային ընդունակություններ	14,30	13,40	13,00

Ստացված արդյունքների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ սիստեմատիկ մարզումների արդյունքում, օգտագործելով ռազմակիրառական պատրաստությանը նպաստող վարժությունները, զգալիորեն բարելավվեց մարզվողների ֆիզիկական պատրաստականության մակարդակները: Արագաշարժությունը՝ 1.2 վրկ, ուժային դրսևորումները՝ 5 անգամ, ճարպկային ընդունակությունները՝ 0,7 վրկ, դիմացկունությունը՝ 1 ր 30 վ:

Որպես ռազմակիրառական պատրաստության ծրագրային բովանդակային նյութ ընտրվեցին համալիր վարժություններ արագաշարժության, ուժի, ճարպկության, դիմացկունության մշակման համար: Շարժողական ընդունակությունների մշակման գործընթացի հիմքում ընկած էր «Շրջանաձև» մարզման մեթոդը անհրաժեշտ կրկնողությունների քանակով:

Եզրահանգումներ: Վերլուծելով գիտամեթոդական գրականության աղբյուրները ռազմակիրառական պատրաստության հիմնական դրույթների վերաբերյալ բացահայտեցինք, որ ռազմակիրառական ֆիզիկական պատրաստությունը իրենից ներկայացնում է ֆիզիկական դաստիարակության մասնագիտական ձև՝ ուղղված աշխատանքային գործունեության առանձնահատկություններին և զինված ուժերում ծառայելու համապատասխան պահանջներին: Ռազմակիրառական ֆիզիկական պատրաստությունը ուղղված է կյանքին անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, օրգանիզմի օրգան համակարգերի ֆունկցիոնալության և աշխատունակության բարձրացմանը:

Շարժողական ընդունակությունների մակարդակի հսկման նպատակով անցկացված թեստերը արագաշարժության, ուժի, ճարպկության և դիմացկունության համար բացահայտեցին այն նախնական մակարդակները, որոնք հետագա փուլային աշխատանքների շնորհիվ, ռազմակիրառական վարժությունների միջոցով, «շրջանաձև» մարզման կազմակերպմամբ և անընդհատ կրկնողությունների միջոցով բարելավվեցին նորակոչիկների շարժողական ընդունակությունների մակարդակները:

Գրականություն

1. Благущ, П. К. Теории тестирования двигательных способностей. М., 1972. - 162 с.
2. Барчуков, И. С. Физическая культура и спорт: методология, теория, практика (учеб. пособие для студентов высш. учеб. Заведений, под ред. Н. Н. Маликова). М., 2006. - 528 с.
3. Варваров, В. Психологическая готовность к бою. – КВС, № 6. 1981, с. 48-52.
4. Качашкин, В. М. Методика физического воспитания. М., 1980. - 251 с.
5. Кузнецов, В. С., Колодницкий Г. А. Прикладная физическая подготовка: 10-11 кл.: учеб. метод. пособие. М., изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003. - 184 с.
6. Рубанович, В. Б. Классификация функциональных состояний и диагностика психоэмоциональной устойчивости. Российский физиологический журнал им. И. М. Сеченова. 2004, часть 2, т. 90- № 8, - с. 420.
7. Солодков, А. С. Физиология человека. Общая. Спортивная. Возрастная. Изд. 2-е, испр. и доп. М., олимпия пресс, 2005. - 528 с.

Пути повышения физической подготовленности новобранцев посредством военных учений

Петросян Артур

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

доцент О. Саргсян

Резюме

Ключевые слова: *военная служба, призывной возраст, процесс, физическая подготовленность, проверка, двигательные навыки, программа*

Целью настоящей статьи является изучение особенностей физической подготовленности новобранцев посредством воинских учений.

К основным задачам, которые необходимо было решить, относятся:

1. изучение соответствующей учебной литературы,
2. выявление уровня физической подготовленности новобранцев,
3. составление программ военно-физической подготовки и оценка их эффективности.

Военно-физическая подготовка считается специализированной формой физического воспитания, которая осуществляется в соответствии с требованиями специального труда и вооруженных сил.

Для выполнения заданий были проведены занятия по развитию моторики.

Ways of Increasing the Physical Fitness of New Recruits through Military Exercises

Petrosyan Artur

Faculty of Social Sciences,

"Physical Education and Sports Training",

Academic Supervisor: H. Sargsyan

Associate Professor

Summary

Key words: *military service, recruitment age, process, physical fitness, test, motor skills, program*

The aim of the following article is to study the characteristic features of physical fitness of new recruits through military exercises.

The main tasks to be accomplished include:

1. studying relevant educational literature,
2. identifying the level of physical fitness of new recruits,
3. drawing up military physical training programs and evaluating their effectiveness.

Military physical training is considered a specialized form of physical education, which is carried out in accordance with the requirements of special labor and armed forces.

Studies on the development of motor skills have been conducted in order to carry out the tasks.

Հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության անցյալ և ներկա ժամանակների համեմատական վերլուծություն

Մարզայան Հարություն

*Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի դեկավար՝ Հ. Մարզայան*

Հանգուցային բառեր. *կուլտուրա, ռազմական, մարզական, վարժություններ, «հիպոդինամիա», գրական աղբյուրներ, ճարպկություն, հայեցակարգ*

Հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության հիմնահարցերը մշտապես եղել են պատմագիրների, մշակութաբանների, ֆիզիկական դաստիարակության մասնագետների, ռազմական գործիչների և ընդհանրապես հայ ժողովրդի ուշադրության և հետաքրքրությունների կենտրոնում: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության առավել հետաքրքիր կողմերը մեկնաբանել և ուսումնասիրել են թե պատմական, թե մշակութային, թե բժշկա-մանկավարժական, հոգեբանական (մասնավորապես՝ մանկահասակ երեխաների ֆիզիկական զարգացման), թե ռազմական տեսանկյուններից:

Հայ ժողովրդի դարավոր մշակույթի մեջ իրենց առանձնակի տեղն են գրավում ֆիզիկական կուլտուրան և ռազմական արվեստը: Դրանք մեր ժողովրդի ստեղծած մշակույթի ամենահին, կարևոր ու մասսայական բնագավառներից են, որոնց արմատները սկիզբ են առել նախնադարյան համայնական հասարակարգի խորքերից: Դարերի ընթացքում ռազմաֆիզիկական վարժությունները վերամշակվել, բազմապատկվել են, ապա էստաֆետային եղանակով փոխանցվելով հաջորդ սերունդներին՝ հասել են մինչև մեր օրերը:

Ինչպես ֆիզիկական վարժություններն ու խաղերի մյուս ձևերը, առավել ևս ռազմա-մարզական վարժությունները և մրցակցային խաղերը մեծ դեր են կատարել երիտասարդության ֆիզիկական ու բարոյականացման հատկությունների (ուժի, արագության, դիմացկունության, ճարպկության, համարձակության, տոկունության, արիության և այլն) զարգացման ու դաստիարակման գործում: Դրանց կիրառումով ժողովուրդը գտել է ֆիզիկապես կոփվելու, առողջությունը ամրապնդելու, դժվարությունները հաղթահարելու, ինչպես նաև ուրախանալու ու զվարճանալու միջոցները:

Ֆիզիկական դաստիարակության կարևորությունը առանձնապես մեծացել է ներկայումս, երբ գիտատեխնիկական հեղափոխությամբ՝ մարդկությանը բարիք տալուն զուգրնթաց, անբարենպաստ պայմաններ են ստեղծվել առողջության ամրապնդման և օրգանիզմի կոփման համար, սահմանափակվել է ջերմակարգավորիչ, կենսաէներգետիկ, սիրտանոթային և այլ համակարգերի գործունեությունը: Ժամանակակից մարդու ապրելակերպին բնորոշ է մկանային գործունեության սահմանափակությունը, որը գիտության մեջ ստացել է «Հիպոդինամիա» անվանումը: Հիպոդինամիայի հետևանքով մարդն ընկել է անբնական պայմանների մեջ, որն անհամատեղելի է էվոլյուցիայի ընթացքում մշակված պայմաններին: Գիտնականները գտնում են, որ մկանային գործունեության սահմանափակումը ոչ պակաս վտանգավոր է, քան թթվածնային կամ վիտամինային անբավարարվածությունը: Ֆիզիկուլտուրան և սպորտը չպետք է դասել այնպիսի նախասիրությունների շարքին, ինչպիսիք են՝ որսորդությունը և ճանապարհորդությունը: Այն չպետք է շփոթել հրապուրանքի հետ, այլ անհրաժեշտ է դասել կենցաղային ամենօրյա պահանջների շարքին, ինչպիսիք են՝ քունը, սնունդ ընդունելը և այլն:

Նպատակն է. ուսումնասիրել հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության հիմնահարցերը անցյալ և ներկա ժամանակներում:

Խնդիրներն են. վեր հանել հին հայկական ռազմամարզական խաղերը, նրանց նկարագրերը, նրանց ազդեցության ոլորտները պատանիների ու երիտասարդների ռազմահայրենական և ֆիզիկական դաստիարակության գործում, ինչպես նաև այն հայեցակարգերը, որոնք ծառայած են ներկայումս՝ հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Համաձայն պատմա-փաստագրական տվյալների՝ հայ ժողովուրդը մշտապես իր գոյության համար ազատագրական պայքար է մղել արտաքին թշնամիների նկատմամբ: Այդ իսկ պատճառով դաստիարակությունն ուղղվել է ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության կողմին, իսկ կենցաղավարությունը կրել է ծիսակատարությունների և ռազմամարզական խաղային բնույթ [1; 2; 3; 4]:

Ռազմամարզական և խաղային վարժությունները, փոխանցվելով սերնդից սերունդ, հարստացել և ստացել են նոր ոճ և նոր իմաստ:

Համաձայն մատենագրական ուսումնասիրությունների՝ Հայաստանում կիրառված ռազմամարզական վարժությունները կամ մենամարտային բնույթ կրող ֆիզիկական վարժություններն ունեցել են բազմադարյան

պատմություն: Դրանք, որպես ազգային մշակույթի տարրեր, ինչպես նաև հայ ազատագրական պատերազմների կարևոր միջոցներ, իրենց արտացոլումն են գտել հայկական գրավոր ու բանավոր բազմաթիվ աղբյուրներում, ինչպես նաև հույն պատմիչների՝ Քսենոփոնի, Հերոդոտի, Ստրաբոնի և Եվսեբիոս Կեսարացու թողած հիշատակություններում [2; 5]:

Համաձայն հայ պատմիչների թողած նյութերի նկարագրությունների՝ դրանք իրենց մեջ պարունակում են թանկարժեք տեղեկություններ, որոնք հնարավորություն են ստեղծել լուսաբանելու ռազմամարզական վարժությունների տարատեսակներին վերաբերող մի շարք կարևոր հարցեր: Այդպիսիք են. վերլուծել և պարզաբանել մենամարտերի տեխնիկան ու տակտիկան, ուսուցման, մարզման ու մրցությունների կանոնները, ի հայտ բերել անցյալի հայ նշանավոր մենամարտիկներին և այլն:

Այս ամենի վերլուծությունները թույլ են տալիս մեզ եզրակացնելու, որ հնում հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակությունը ընթացել է 2 ուղղություններով.

1. քաղաքացիական՝ ռազմամարզական,
2. ռազմական՝ մրցակցային խաղերով:

Որպես քաղաքացիական ուղղվածություն՝ հատուկ ուշադրություն է դարձվել պատանի և երիտասարդ սերնդի մարմնի կոփմանը, առողջ մարմնի դաստիարակությանը, նրանց միջոցներին և կատարման ձևերին:

Ռազմական նկատառումներով խաղի՝ որպես կյանքի բարդ երևույթների վերարտադրության, հիմքում ընկած են այնպիսի երևույթներ, որոնք հատուկ են ամեն մի երկրի քաղաքացիական, քաղաքական և ռազմական կյանքին ու արվեստին:

Ռազմամարզական խաղերի մեջ առկա են հակադիր «բանակներ» (թիմեր) կազմելու եղանակները, ուժերի հավասարակշռության համար վիճակահանման օրենքները: Դրանք այսպես կոչված խաղաղ շրջանում գործող օրենքներն են, որոնք, սակայն, խախտվում են միայն այն դեպքում, երբ խաղային կոնվները ծագում են այնպես անակնկալ, ինչպես իրական կոնվները [8; 9]:

Ռազմամարզական խաղերն իրենց մեջ պարունակել են այնպիսի որակներ, որոնք խաղացողների մեջ պետք է զարգացնեին ուժ, մենամարտելու կարողություններ, ճարպկային, ճկունային, կողորդինացիոն ընդունակություններ՝ ռազմատակտիկական քայլեր մշակելու, նշանառության և այլ դրսևորումներ:

Աղյուսակ 1

Ընդունակություններ	Գործունեության տեսակ	Տարիքներ
Ուժային վարժություններ	Կոփման վարժություններ, շփումներ, գրկախաղեր, քայլելուն նպաստող վարժությունների համար ուժի գործադրում,	Վաղ մանկական հասակ
	Երկու ձոքով քարերի և փայտերի բարձրացում և նետում, գլորում, ծանրության տեղափոխումներ	Մինչև 5 տարեկաններ
	հասակային դասին պատկանող երեխաների խաղեր ու կատակակոչիվներ	5-6 տարեկաններ
	Իրար ձգել-քաշելու գործողություններ, գավազանի խլումներ	Մանկական-պատանեկան տարիք
	Ծանրություն հաղթահարելու ձևեր, ծանրության բարձրացումներ, առարկաների հետ մղումներ, նետումներ, շրջումներ, ձգումներ:	պատանիներ
Ճարպկային և ճկունային վարժություններ	Ծանր քարերի տեղափոխումներ, նետումներ, մատների, բազուկների և ոտքերի ուժեղացման հետ կապված մի շարք խաղ-վարժություններ, տարբեր ձևերով իրար շրջումներ: Մենամարտերի տեսակներ:	Երիտասարդներ
	Լախտախաղեր, արագ կողմնորոշվելու հնարավորություններ, ցատկեր երկարություն, բարձրություն: Բերդախաղեր, գնդակախաղեր	Պատանիներ և երիտասարդներ
Կոորդինացիոն վարժություններ	Ծիսական խաղեր, նետաղետով նշանառությունները, ընկուզախաղերը, հոլախաղերը, վեգախաղերի մեծ մասը, լախտախաղերը, ձվախաղերի մի մասը և այլն: Ջիախաղեր:	Պատանիներ և երիտասարդներ

Հարկ է նշել, որ Հայաստանում ֆիզիկական դաստիարակության գործի նկատառումով կարելի է ասել, որ ընդունված է եղել տարիքային խմբավորման հետևյալ պատկերը.

- ա. Պատանեկության շրջան (7-17 տարեկան).
- բ. երիտասարդության շրջան (17-40 տարեկան).
- գ. ծերության հասակ (40-50 տարեկան).
- դ. գառավյալության շրջան (50-ից բարձր տարիք) [9]:

Ավելորդ չենք համարում համեմատության կարգով մեջբերել ժամանակակից սպորտի պրակտիկայում տեղ գտած տարիքային խմբավորման բնորոշումը.

- ա. դեռահասներ (14-16 տարեկան),
- բ. պատանիներ (17-18 տարեկան),
- գ. երիտասարդներ (19-25 տարեկան),
- դ. մեծահասակներ (23 կամ 25 տարեկանից բարձր):

Ներկայումս, համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշման, հաստատվել է մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման հայեցակարգը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի բնագավառի զարգացման երկարաժամկետ հեռանկարի (հինգ և ավելի տարիներ) ապահովման ուղիների և միջոցների որոշումն ու սահմանումը: Այդ նպատակին համապատասխան հայեցակարգում հավաստանշվել են.

- մասսայական սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հանրապետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, ինչպես նաև գործնականում դրանց իրականացման ցուցիչները,
- ֆիզիկական կուլտուրայի, առողջ ապրելակերպի և մասսայական սպորտի ՀՀ տարածաշրջանային առանձնահատկությունները և որակական փոփոխություններ իրականացնելու համար պահանջվող աղբյուրներն ու առկա հնարավորությունները,
- բնագավառի հիմնախնդիրները, ներառյալ դրանց առաջացման պատճառների վերլուծությունն ու մատնանշված խնդիրները սույն հայեցակարգի շրջանակում լուծելու նպատակահարմարությունը,
- խնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- առաջադրված նպատակի իրագործումը և հիմնահարցի լուծումը բնութագրող գործողություններն ու չափանիշները,
- ենթադրվող ծրագրերն ու նախատեսվող առանձին միջոցառումները,
- պետական կարգավորման համատեքստում հնարավոր միջոցառումների ցանկը:

Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգաց-


ման անընդհատությունն անհրաժեշտ է, քանի որ այդ գործընթացը նպաստում է անձի համակողմանի զարգացմանը, առողջության և աշխատունակության բարձրացմանը, հայրենիքի պաշտպանության նախապատրաստմանը, հետևաբար նաև Հայաստանի Հանրապետության հզորացմանն ու պետականության ամրապնդմանը:

Մասսայական կամ զանգվածային սպորտը սահմանվում է իբրև սպորտի բնագավառ, որն ուղղված է քաղաքացիների (բնակչության լայն մասսաների) ֆիզիկական զարգացմանն ու ֆիզիկական դաստիարակությանը (կազմակերպված և ինքնուրույն պարապմունքների անցկացման, ինչպես նաև ֆիզկուլտուրային և մարզական զանգվածային միջոցառումներին մասնակցելու միջոցով): Բացի այդ՝ հայրենական սպորտի մասնագետները վկայում են, որ անհատի ֆիզիկական դաստիարակությունը պետք է լինի բազմամյա, հարաշարժ, անընդհատ, հաջորդական և համակարգված գործընթաց, շարունակվի ամբողջ կյանքում, ներգրավի ազգաբնակչության տարբեր տարիքասեռային խմբերն ու սոցիալական բոլոր շերտերը [10]:

Ինչպես հնում, այնպես էլ ներկայիս հայ հասարակությունում առողջ ապրելակերպի խթանումն ու մասսայական սպորտի զարգացումը առանձնակի կարևոր և խիստ հրատապ հարց է:

Ֆիզիկական կուլտուրան իբրև ուսումնական առարկա ընդգրկված է ուսումնական բոլոր հաստատությունների, ինչպես նաև ՀՀ ՁՈՒ ռազմաֆիզիկական պատրաստության ծրագրերում: Դրա միջոցով իրականացվում են սպորտի ընդհանուր կրթադաստիարակչական, ինչպես նաև առողջարարական, ժամանցային և կիրառական-նախապատրաստական խնդիրները:

Համաձայն վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունը կանոնավոր ֆիզիկական գործունեության առումով հետ է մնում զարգացող երկրներից: Հիշյալ երկրներում ֆիզիկական կուլտուրայով զբաղվում է բնակչության ավելի քան 40-50 %-ը, այն դեպքում, երբ Հայաստանում (ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների) 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հավաստանշվել է բնակչության ավելի քան 7 %-ի ֆիզկուլտուրային կանոնավոր զբաղվածություն, իսկ 15 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում ֆիզիկական թերակտիվության ցուցանիշը կազմել է 16,5 %: Ֆիզիկապես թերակտիվ տղամարդկանց և կանանց քանակը կազմել է համապատասխանաբար՝ 10,4 և 22,3 %: Եվ քանի որ ֆիզիկական թերակտիվությունն աճում է տարիքի հետ, ուստի ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են 60-69 տարեկանների (29,3 %) և 70 տարեկան ու ավելի բարձր տարիքային (42,6 %) խմբերում [10]:



Տրամազիր. Ազգաբնակչության ֆիզիկական թերակտիվության ցուցանիշներ

Եզրահանգումներ: Ուսումնասիրելով հայ ժողովրդի կենսակերպը, մշակույթը, մարտահրավերները, ծրագրային պահանջները, շարժողական պահանջմունքը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվողների փաստացի տվյալները՝ հանգում ենք այն եզրակացության, որ թե՛ հնում, թե՛ ներկայիս ժամանակներում հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության առաջնահերթությունը առողջության պահպանումն է, ֆիզիկական պատրաստության բավարար մակարդակի ապահովումն է: Եթե հնում այն իրականացվել է 2 հիմնական ուղղություններով, ապա այսօր, բարձր տեխնոլոգիական ժամանակաշրջանում, երբ նվազում է մարդու շարժունակությունը, ավելի են կարևորվում ֆիզիկական դաստիարակության համալիր ու հետևողական իրականացման պահանջները: Այդ մտահոգիչ խնդրին է ուղղված ՀՀ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքը», ՀՀ կառավարության որոշումները և հայեցակարգերը:

Գրականություն

1. Մովսիսյան Աբ., Ակնարկ հին հայերի կրթության մասին, Երևան, 1939:
2. Մովսիսյան Աշ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմություն, Երևան, 1958, էջ 484:
3. Իսպիրյան Մ., Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն, Երևան, 2002:
4. Սրվանձտյան Գ., Արժիվ Վասպուրականի, Վան-Վարագ, 1861, N 4:
5. Բոթյան Վ., Հայ ժողովրական խաղեր, հատոր 2, Երևան, 1980:
6. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
7. Սմբատ Իշխան, Գունդստաբլի դատաստանագիրք, խաղացողներին վերաբերող օրենքներ, Էջմիածին, 1918:
9. Աթոյան Կ., Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում, Երևան, 1965:
10. ՀՀ կառավարության որոշում «Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման հայեցակարգ», Երևան, 2019:

Сравнительный анализ физического воспитания армянского народа в прошлом и в современности

Арутюн Саргсян

Факультет социальных наук,

«Физическое воспитание и спортивные тренировки»,

руководитель магистерской диссертации:

доцент О. Саргсян

Резюме

Ключевые слова: *культура, военная, спортивная, упражнения, «гиподинамия», литературные источники, ловкость, концепция*

Изучив образ жизни, культуру, вызовы армянского народа, программные требования, двигательные потребности, фактические данные людей, занимающихся физической культурой и спортом, приходим к следующему выводу: как в древности, так и в нынешнее время приоритетом физического воспитания армянского народа является сохранение здоровья, обеспечение достаточного уровня физической подготовки. Если в древности она осуществлялась в двух основных направлениях, то сегодня, в эпоху высоких технологий, когда снижается подвижность человека, все более важны требования к комплексному и последовательному осуществлению физического воспитания. На эту тревожную проблему направлены «Закон о физической культуре и спорте» РА, решения и концепции правительства РА.

Comparative Analysis of Physical Education of the Armenian People in the Past and Nowadays

Harutyun Sargsyan

Faculty of Social Sciences,

"Physical Education and Sports Training",

Academic Supervisor: H. Sargsyan

Associate Professor

Summary

Key words: *culture, military, sports, exercises, "hypodinamy", literary sources, dexterity, concept*

Having studied the lifestyle, culture, challenges of the Armenian people, along with the program requirements, motor needs, factual data of people engaged in physical culture and sports, we came to the following conclusion: both in ancient times and at present, the priority of physical education of the Armenian people has been preserving health and ensuring a sufficient level of physical fitness. If in ancient times it was carried out in two main directions, today, in the era of high technologies, when the physical activity of people is decreasing, the requirements for the comprehensive and consistent implementation of physical education are increasingly important. The RA "Law on Physical Culture and Sports", decisions and concepts of the Government of the RA are aimed at this alarming problem.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քոչինյան Արփինե

Ավտոմատացման սերվերի ինտեգրման խնդրի դրվածքը
թեստավորման հաշվետվության ճկուն գործիքի հետ.....8

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Ալեքսանյան Արփինե

Մովորողների գեղագիտական դաստիարակության
անհրաժեշտությունը արդի պայմաններում.....17

Մուրադյան Լուսինե

Գեղագիտական դաստիարակության
առանձնահատկություններն ու միջոցները կրտսեր դպրոցում.....30

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄԵՐ

Ալավերդյան Էլլադա

Ֆիզիկական կուլտուրայի դերն ու նշանակությունը ՄՄՈՒՀ-ի
սովորողների ուսումնառության գործընթացում.....42

Ապրեսյան Աննա

Հատուկ բժշկական խմբերի դրվածքի ուսումնասիրությունը
հանրակրթական դպրոցներում.....54

Գևորգյան Ռոբերտ

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի հանդեպ վերաբերմունքը և
վերլուծությունը միջին դասարաններում.....61

Հարությունյան Մանե

Պատանի աթլետների ֆիզիկական զարգացման և շարժողական
պատրաստվածության ցուցանիշների վերլուծություն..... 69

Մարտիրոսյան Ռաֆիկ

Վանաձորի բարձրագույն ուսումնական հաստատությունների քոլեջների ուսանողների, սպորտդպրոցների մարզիչների և մարզիկների, այդ թվում ՎՊՀ ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը77

Պետրոսյան Արթուր

Նորակոչիկների ֆիզիկական պատրաստության բարձրացման ուղիները ռազմակիրառական վարժությունների միջոցով.....85

Սարգսյան Հարություն

Հայ ժողովրդի ֆիզիկական դաստիարակության անցյալ և ներկա ժամանակների համեմատական վերլուծություն.....93

СОДЕРЖАНИЕ

ПРОГРАММНАЯ ИНЖЕНЕРИЯ

Кочинян Арпине

Постановка задачи интеграции сервера
автоматизации с гибким инструментом отчетов о тестировании8

ШКОЛЬНАЯ ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

Алексяня Арпине

Необходимость эстетического воспитания учащихся
в современных условиях.....17

Мурадян Лусине

Особенности и средства эстетического воспитания
в средней школе.....30

ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ И СПОРТИВНЫЕ ТРЕНИРОВКИ

Алавердян Эллада

Роль и значение физической культуры в
процессе обучения студентов СПУЗ42

Апресян Анна

Исследование создания специальных медицинских групп в
общеобразовательных школах54

Геворгян Роберт

Исследование и анализ отношения учеников средней школы
к предмету физическая культура61

Арутюнян Мане

Анализ показателей физического развития и двигательной
подготовленности юных атлетов.....69

Мартirosян Рафик

Анализ результатов социологического опроса, проведенного среди студентов высших учебных заведений и колледжей Ванадзора, тренеров и спортсменов спортивных школ и студентов ВГУ77

Петросян Артур

Пути повышения физической подготовленности новобранцев посредством военных учений85

Саргсян Арутюн

Сравнительный анализ физического воспитания армянского народа в прошлом и в современности93

CONTENTS

SOFTWARE ENGINEERING

Kochinyan Arpine

Statement of the Problem of Integrating an Automation Server
with a Flexible Test Reporting Tool8

SCHOOL PEDAGOGY AND METHODOLOGY

Aleksanyan Arpine

The Significance of Aesthetic Education of Learners
in Modern Conditions17

Muradyan Lusine

Features and Tools of Aesthetic Education in Junior School30

PHYSICAL EDUCATION AND SPORTS TRAINING

Alaverdyan Ellada

The Role and Importance of Physical Culture in the Learning Process of
Students of Secondary Vocational Educational Institutions42

Apresyan Anna

Research on the Organization of Special Medical Groups
in Public Schools54

Gevorgyan Robert

Research and Analysis of the Attitude of Secondary School Pupils towards the
Subject of Physical Education.....61

Harutyunyan Mane

Analysis of Indicators of Physical Development and Motor Readiness
of Young Athletes69

Martirosyan Rafik

The Higher Vocational Education Analysis of the Results of the Sociological Survey conducted among Students of HEIs and Colleges of Vanadzor, Coaches and Athletes of Sports Schools and Students of VSU.....77

Petrosyan Artur

Ways of Increasing the Physical Fitness of New Recruits through Military Exercises85

Sargsyan Harutyun

Comparative Analysis of Physical Education of the Armenian People in the Past and Nowadays.....93

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2

ՎԱՆԱԶՈՐ
2023

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА**

**ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА**

МАГИСТР

2

**ВАНАДЗОР
2023**

**THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE
AND SPORTS OF THE RA**

**VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN**

MASTER STUDENT

2

VANADZOR
2023

Լեզվական խմբագիրներ՝ *Վալերի Փիլոյան, Ջառա Ալեքյան*
Համակարգչային ձևավորումը՝ *Աշխեն Գալստյանի*

Языковые редакторы: *Валерий Пилоян, Зара Алекян*
Компьютерное оформление: *Ашкен Галстян*

Linguistic Editors: *Valeri Piloyan, Zara Alekyan*
Computer Design: *by Ashkhen Galstyan*

